

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ


ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԳՐԱԿԱՆ. Խորհրդածութիւնք հին ու նոր դասկանութեան վրա. Դիւցաղ-
 ներգութիւն ու վիպասանութիւն Գ. Ս. ՕՏԵԱՆ
 ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ. Խոստովանանք, առ Տէր. Բաճանայ Տէր Բաճանայ
 ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ. Տառնայէվսքի և իւր գործերն Լ. Բ.
 ԶԱՆԱԶԱՆՔ. Մատենադարան Սնգլիական թանգարանի
 ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ. Բանի ամուսնացեալ աղջիկը
 ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ. Արտաբէն, Ներքին, Աղբային
 ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ. (ԿԶԱՎԻՆ ՏԸ ՄՕՆԹԵԻՆԷՆ) Թարգմ. Մ. ՉՈՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. Պոլիս եւ գաւառներու — տարեկան Կէս Օսման. ոսկի
 » » վեցամսեայ Բառ » »
 Մէկ թերթին գինն է 60 փարայ
 Օտար քաղաքացի համար տարեկան 12 Ֆրանք
 » » վեցամսեայ 6 »
 Թղթատարութեան ծախք տարեկան Դահ. արծ. 15
 վեցամսեայ 7 1/2

Մասիսի խմբագրութեան ուղղեալ ո՛ր եւ է գրութիւն կամ նամակ պէտք է
 ուղղել առ



Խմբագրութիւն Արեւելք և Մասիս լրագրաց
 Ղալաթիա, Նորատուրկեան խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՇԱՐՆԵԼԷՔ ԼՐԱԳՐՈՅ

1885

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 25 Յունվար

ԸՆԹԱՅՔ ՓՈՒՍՆԱԿԱԳՐՈՅ

ամիս Լոնտայի վրայ (պանդայի)	110	1/4
3 » » » (վճռակն)	109	7/8
3 » Բարիլի » (պանդայի)	22	90
3 » » » (վճռակն)	22	57 1/2

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմանեան Բոնսոյիտե

Երէկ երեկոյ դոցուեցաւ	Գ. Կ.	9	17
Պորայի դոցուեցաւ վերջը	»	9	18
Բերայի մէջ	»	—	—
Առաւօտուն բացուեցաւ	»	9	21
Բարձրագոյն դին	»	9	21 1/2
Նուազագոյն	»	9	20 1/2
Կէս օրին	»	9	21
Իւնիֆիէ Եփրատական Գ. Կ.	77		
Երէկ Երեկուն դոցուեցաւ	76		
Բերայի մէջ	—		
Այս առտու բացուեցաւ Գ. Կ.	75	35	
Կէս օրին	75	35	
Հէվայէսիզ	12	1/2	
Բերայի դոցուեցաւ	—		
» Իւնիֆիէի	—		
Փոխառութիւն 1863	Փր.	78	
» 1865	»	60	
» 1869	»	52	
» 1873	»	47	
Պոն տիւ Թրէզոր	Անգլ. Լ. Բ.	22	50
Բուժէրի երկաթուղի	Փր.	46	75
Օպիկատիոն տը Բրիտիթ	»	—	
Բաժնեթուղթ Լաւրիոսի	»	70	

ԲԱՆՆԵՏՈՒՄ

Սոսիէթէ Ժէնէրալ	Գ. Կ.	Անգլ. Լ. Բ.	3	20
Գրէտի Ժէնէրալ	»	»	0	30
Պանք տը Գոնս	»	»	5	10
Սոս. Շանտ է վալէօր	»	»	0	25
Թրամուէյ	»	»	267	1/2

Ընթացք դրամոյ

Օսմանեան ոսկի	Պր.	100
20 Փրանքնոց	»	87 31
Անգլիական ոսկի	»	110 20
Բոլ Իմէրիալ	»	90 18
Քրիմից	»	54 20
Բուպի թղթագրամ	»	8 56
» արծաթ	»	89 10
Ֆիօրին	»	9 2
Մէճ. արծ. (տարբ.)	»	407 38
Վ. Եցնոց	»	402 35
Հինգնոց	»	402 35

Մէթալիք	»	99
Պրինի	»	800
Թղթագրամ	»	3200

ԵՆԻՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտան, 5 Փետրվար Ժամ 5 վայր. 15 երեկոյ		
Անգլ. քոնսոյիտե դոցուեցաւ	100	1/16
Օսմն. բացուեցաւ	17	1/8
» » դոցուեցաւ	17	5/16
Օսմն. փոխառութիւն 1865	42	
» » 1869	40	5/8
» » 1871	70	1/2
» » 1872	20	1/2
» » 1873	9	1/4
Փոխառութիւն	1877	84
Պանք Օթոման	43	7/8
Ռուսական փոխառ. 73 (գ. Կ.)	97	1/2
Եփրատական միացեալ (Իւնիֆիէ)	67	5/4
» առանձն. (Բրիտիթի)	88	7/8
Տպրա Սանիէ	66	
Տոմանիալ (փոխառ. Բոչիլտ)	88	
Հունգարական պարտաթուղթ 1877	—	
Փոխառութիւն Բարիլի վրայ	—	

Վ. Իէննա, 5 Փետրվար Ժամ 4 երեկոյ

Փոխառութիւն Լոնտանի վրայ	123	90
Օսմանեան երկաթուղի	22	90

Բարիլ, 5 Փետրվար Ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0	բաց	109	50
» » 3 0/0	բաց	80	90
Օսմանեան քոնսոյիտե բացուեցաւ	»	17	40
» » դոցու. գ. Կ.	»	17	40
» » 1865	»	60	
» » 1869	»	53	
» » 1873	»	47	
Օսմանեան երկաթուղի	»	47	62 1/2
» Բէթի բաժնեթուղթ	»	—	
Պանք Օթոման	»	603	75
Գրէտի Լիօն	»	547	50
» Ֆիօրին գ. Կ.	»	1328	75
Բաժնետոմս Լիօնի (գուր. կտր.)	»	1272	50
Սուէզի ջրանցք	»	1865	
Ռուսական 5 0/0 1877ի (գ. Կ.)	»	100	
Իտալական Ռանթ (գ. Կ.)	»	97	97 1/2
Եփրատական միացեալ գոց	»	345	
Սպանիական (արտաքին) (գ. Կ.)	»	61	5/4
Բրիտիթի Բիւրք	»	408	75
50/0 Հելլենական (գ. Կ.)	»	348	75
2 1/2 Լոնտայի վրայ	»	25	33

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

3477 ՏԱՐԻ

1885 ՅՈՒՆՈՒԱՐ 26

ԹԻԻ 3754

ԳՐԱԿԱՆ

ԽՈՐՀՐՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ

ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱ

ԴԻԻՑԱԶՆԵՐԳՈՒԹԻՒՆ ՈՒ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

Վսեմ. Օտեան էֆէնտիէ յօդուած մը գրական մեծ դէպք մ'է միշտ, և անխոր ամէն կարգի ընթերցողաց կ'ազդէ անդիմադրելի հրապրելով: Հետեւեալ յօդուածը Վսեմ. Օտեան էֆէնտիի երիտասարդութեան մի աշխատութիւնն է, լամբութիւնի Ռոփայէի թարգմանութեան առթիւ գրուած և որ ցարդ անտիպ մնացած էր: Այժմ որ ազգային վիպասանութեան նոր թուական մը կը բացուի, անտարակոյս ամէն ոք գոհ պիտի մնայ լսել այսպիսի հեղինակութեան մը ձայնը: Արդարեւ քսան և երկու տարիներէ ի վեր վիպասանութիւնը բաւական կերպարանափոխութիւն կրած է, բայց նորա հիմնական օրէնքներն ամէն ժամանակի համար են. այսու հօնը երձ այդ օրէնք ստեպ կը կարօտի պաշտպանութեան:

Սոյն գրութիւնը այն ժամանակի ուղղափոսական ոճովն է, զոր կ'ուզէին ներմուծել առ մեզ Ռուսիան, Օտեան, Թընկըրեան:

Գրականութիւնը մարդկային բարուց, զգացմանց ու մտածութեանց պատկերը կը ներկայացնէ, դարէ ի դար: Ա՛ռազէս խմանալ ի՞նչ կ'ընէին, ի՞նչ կը մտածէին, ի՞նչ կը հաւտային, ի՞նչպէս կը կառավարուէին, մէկ բառով՝ ի՞նչպէս կ'ապրէին նախնիք այսինչ դարին մէջ. բա՛ց այն դարին զրականութիւնը, բա՛ց այն ինչ գիրքը որ նոյն դարին մէկ հատընտիրն ըլլայ գրականութեան: Դարը և ընկերութեան վիճակը աւելի ազդեցութիւն ունի դուցէ մատենագիրի վրա, քան թէ մատենագիրը ընկերութեան վրա. ընդհանուրին կեանքը, ամէնին մտածութիւններն ու զգացումները, կը համառօտի ու կը ճառագայթէ զօրաւոր իմացականութեան մը մէջ:

Աւասիկ մարդ մը՝ որ նոր միտք մը, նոր ճշմարտութիւն մը, մինչեւ անգամ կը համարձակինք ըսել նոր գիւտ մը՝ կուգայ հրաշակել աշխարհի և դաշխարհ իր համարանը դարձնել. բայց ապահով եղի՛ր որ մարդիկ ալ քիչ-շատ պատրաստեալ էին այն նոր միտքը, այն նոր ճշմարտութիւնը, այն նոր գիւտը ընդունելու, անոր ի խնդիր կը դեգերէին: Արնանք ըսել թէ սրբէք նոր բան մը յ'անպատրաստի չ'ըմբռնեց ըզմարդիկ: Ճշմարտութիւնը, կամ նոր գաղափարը, կամ նոր գիւտը, ասոր անոր մըտքին մէջ արդէն ծագած կ'ըլլայ, շատերը՝ դանի կէս մը նըշմարած կ'ըլլան, լոյսը դեռ իմացականութիւն մը չ'ողողած՝ կա՛յծը շատերուն մըտքին խաւարը ծակած կ'ըլլայ և այն մասնական կայծերը կը միանան ու կը ճառագայթեն մըտքի մէջ, որմէ կը ցօլանայ դարձեալ ընկերութեան վրա: Աւրէմն՝ ընկերութեան մատենագիրին և մատենագիրն ընկերութեան վրա, բազմութեան անհատին և անհատին բազմութեան վրա ներգործութիւնը կայ, ուրէմն անձնիւր ժամանակին իր գրականութիւնը, իր իմաստասիրութիւնը, իր բանաստեղծութիւնը և իր արհեստները:

Մենք հոս այս երեւումը, կրնանք ըսել օրէնքը, բանաստեղծութեան վրա կ'ուզենք ցուցնել. մեր ընթերցողաց մեծ մասը հին պատմութեան և հին դարերու բանաստեղծութեան միայն ծանօթ ըլլալը գիտնալով, բաղդատել նախնական ժամանակները. մեր ժամանակներուն հետ և անոնց բաղդատութենէն, հին ժամանակի բանաստեղծութեան և նոր ժամանակի բանաստեղծութեան մէջ եղած տարբերութեան գաղտնիքը հանել:

Մարդկութեան պատմութիւնն ալ մէկ մարդուն պատմութեանը ոլէս բան մըն է:

Ով որ ըզմարդն աղէկ ուսած է, կըրնայ ըզմարդկութիւնն ալ բաւական ուսած համարվիլ. ան ալ մեզի պէս իր անմեղ ու մատուալ տարիքն ունի, իր թարմ մանկութիւնը, իր վառվըռուն երիտասարդութիւնն ու հասուն և փորձառու տարիքը: Մարդկութիւնն ալ աղայ էր ատեն մը. նոյն և նման ինչպէս մենք տղայ եղայ եղած ենք, ամեն բանի հաւատ ընծայօղ, զուրկ խորհրդածութենէ, սիրտերնիս դեռ նոր բացված կիլքերո՞ւ և լեզունիս խօսակցութեան, աչքերնիս վախճալով մեծ մեծ բաներ տեսնելէ, տկանջնիս սուր մեծ մեծ բաներ լսելու: Այս տարիքին մէջ ուր չորս կողմերնիս եղածներէն բան մը չենք հասկընար և չենք ալ ուզեր հասկընալ, դարմանալի հակասութեամբ մը, մենէ վեր՝ խեղճ մըտքէ վեր մտացածին եղելութիւններ լսելու ետեւէ ենք: Ինչ բան որ ըսեն մեզի կը հաւատանք, միայն թէ անհեթեթ ու ըսքանչելեօք խառն եղելութիւններ ըլլան անոնք. մարդս իր տղայութեանը մէջ՝ կոյր հաւատքի թեւերուն վրա ո՞րչափ բարձր ուղես կը թըռչի և անհասանելոյն միջոցաւ ըսվիւսներուն մէջ կ'ամառ և յօժարաւ կը թըռչնայ և ատի դիւրին է իրեն համար:

Այսպէս է մարդկութիւնն ալ իր դոյութեան առաջին դարերուն մէջ. քուն թէ արթուն՝ ամենայն ինչ երազ է տեսածը, ամենայն ինչ խօլերեւոյթ է, վիթխարի մարդիկ ու անհեթեթ եղելութիւնք: Իր ճարտարապետութիւնը քար քարի վրայ դիւղել ու ծայրը մինչև երկինք հասցընելն է, իր սլաքաթիւնը դիցարանութիւնն է. ամեն բան խօշորայոցով կը տեսնէ, անհուն ըսքանչելք մը ամեն բանի չորս կողմը պատած է: Աստուածներ, կիսաստուածներ, յուշկապարկներ, հսկայներ միայն կը տեսնէ. մարդիկ ունի որ մէկ ոտքերնին Ափրիկէ ու միւս ոտքերնին Նեքոպէ դրած սրունքներնուն տակէն ծով մը կ'անցնի: Կ'անշան դիւղադուններէն մէկը՝ մեռնելու վայրկենին՝ ոչխարի հօտ մը ճանճի մը պէս կը խըղդէ իր կատաղութեան մէջ: Բանաստեղծութիւնն ալ, կամ աւելի ճիշդ ըսենք՝ բանաստեղծութեան ձևը, դիցարանագութիւնն է՝ դիցարանութեան վրա հիմնալ:

Բայց մարդկութիւնը, որպէս և ոչ իսկ մարդը, չեն կրնար միշտ տղայ մնալ ու

միշտ ի քուն երազել... Հետագորդութեան խթանը կուգայ դըրդել զինքը, կամ թէ միտքին կարողութիւնները կատարելագործելով յարբունա հասած կ'ըլլայ, ամեն բան կ'ուզէ աչքովը տեսնել, հետադօտել, քըննել, ըստուգել ու խորհրդածութեամբ հաւատալ: Այս ժամանակը՝ թէ՛ մասնաւոր մարդուն համար և թէ՛ ընդհանուր մարդկութեան համար այրական հասակն է: Նայէ՛ սա կըարիճը, մօրը դիւրի իրեն բարձրած, անոր ըստինքէն առկախուկ, դեռ երէկ տունին սեմէն անդին անցած չէր և յաղահովի կ'ապրէր, այսօր արխաբար կը թօթվէ տղայութեան խաղալիքները, մէկդի կը նետէ մատաղ հասակին բոլոր քաղցր յիշատակները, հայրական վառարանին առընթեր սլաքաթած բոլոր վէպերը, իր փափուկ միտքը կախարդօղ հրաշալիքները, դուրս կ'իյնայ և ամեն բան ինքիրմով խմանալու ծարաւով մըլուած, ամեն զի կը վազէ: Իրան՝ առաջ աւելի հանդարտ էր, աւելի խելօք կ'ըսէր, աւելի հնազանդ, որով և աւելի ապահով վիճակի մէջ, ու հիմա մարդ մտիկ չ'ընէր ու հիմա վտանգ կը դիմադրաւ ու հիմա դուր դադար չ'ունի, որովհետեւ ա'լ տղայ չ'է, ա'լ մարդ է ինք ալ ուրիշներուն պէս, ա'լ ինքզինքին տէ՛րն է: Մարդու այս հասակին մէջ մեծ յեղափոխութիւն մը կ'ըլլայ, մարդը կամ մարդկութիւնը մէկ վիճակէն մէկալն անցած է: Առաջ մանուկ էր կաթընկեր, նա աւանիկ երիտասարդ մըն է ինքնագլուխ:

Ջարմանալի բան չ'է ուրեմն որ գրականութիւնն ալ և մասնաւորապէս խօսելով բանաստեղծութիւնը, որ մարդուս ներքին ճայներուն արձագանգն է, իր դէմքը փոխէ այն միջոցին ուր մարդուս վրա ամեն բան կը փոխվի: Անոր համար է ահա՛ որ գրականութիւնը ազատ և առոյգ մարդու քայլվածն առած է այս դարին մէջ, անո՛ր համար է որ՝ բանաստեղծութիւնն ալ աւելի իրական բաներու վրայ կը դառնայ, նկարագրութիւնը այլաբանութեան տեղը կ'անցնի և վիստատութիւնը դիցարանագութեան: Արդի բանաստեղծք իրենց ժամանակին հողիովը ներքնչեալ և դարին միտքերովը զգածեալ, կը թողուն մատուցել, մտացածին ու երեւակայեալ աշխարհը որ կարգէ դուրս մարդիկներով ու գործերով

և այլանդակ կիրքերով ու անտերով ի է իր համայն մեծութեամբը, և բնութեան հրաշալեաց պննութեանը մէջ և զլսաւորապէս սիրոյ մէջ, որ ըզհամայն բնութիւնը կը հոգեւորէ, կը գըմանեն շատ անգամ իրենց խանդն ու բոլոր յափշտակութիւնը:

Այն հին ձեւը բանաստեղծութեան, երկար ու տաղաւոր գրութիւնները զիւցադնեղութեան, այն հրաշալեաց հազներգութիւնները որ երբեմն կ'ըզմայլեցնէին ըզմարդիկ, այսօր մեռեալ ձեւ մըն է, արդի սերունդին ո'չ մըտքին կը խօսի և ո'չ սըրտին. տղայական երեւակայութեան հզօր ծնունդը՝ մարդու տղայութեանը հետ անցած է ան ալ: Այսօր ով որ, ազատ հանախապաշարունմեքէ, կարգայ հիներուն քերթութեանը ու նոր հատընտիրները, անշուշտ աւելի իսկութիւն, աւելի խանդ, աւելի բարեպաշտութիւն, աւելի ներշնչում, աւելի մաքրութիւն կը գըտնէ՝ Աթալայի, Պօղոս և Վիրգիլիայի, Ժօսէֆի և Ռափայէի մէջ, քան նոյն իսկ այն բանաստեղծներուն քերթութեանը մէջ որոնք հայր եղած են բանաստեղծութեան, զորօրինակ՝ Հովերի Եղիականին ու Վիրգիլի Էնէականին մէջ:

Քանի՛ տարբերութիւն Ռափայէի սիրոյն որ «Մարդս՝ բարի՛, մաքուր, լուրջ, խանդավառ, աղօթասէր, և բարեպաշտ» կ'ընէ, և այն կոյր սիրահարութեան ու մոլեղին տուփանաց, որոյ հետեւանքն է վայրենի առեւանգ ու կատաղի պատերազմ:

Մէքը՝ Պարիսի սըրտին մէջ բոց մըն է լավիկոզ որ մարդս կ'այրէ, կը տոչորէ և որ ընդ փայլիկն կը մարի, ետեւէն ձգելով աւերակներու ծո'ւխն որ դեռ կը միսայ. իսկ Ռափայէի սրտին մէջ՝ նուիրական հո'ւր մըն է որ կը բորբոքէ առանց այրելու, որ կը վառէ մարդու սիրտը ու կը մաքրէ՝ վառելով. Լամաութին գանի մկրտութիւն մը կը կոչէ ի հուր և ծայրէ ի ծայր Ռափայէի գեղեցիկ էջերուն մէջ իր ըսածը կը հաստատէ. «Օ՛հ, կը գոչէ սիրավառ բանաստեղծը՝ իր անարատ սիրոյն զմայլմանցը մէջ յափշտակուած, օ՛հ, եթէ եղբայր մ'ունիս, կամ որդի՛ կամ բարեկամ, որ առաքինութիւնն ինչ է երբէք հասկըցած չ'ըլլայ, աղօթէ առ Աստուած որ սիրե՛լ տայ անոր, ինչպէս ես սիրեցի: Քանի որ սիրելու ըլ-

լայ, ամենայն անձնութեանց, ամենայն զիւցալեական արութեանց ձեռնհաս կ'ըլլայ որ բարձրանայ ի բարձրութիւն իր սիրոյն, և երբ սէրը մարի, անիէ ետեւ ա՛լ յաւիտեան կը մնայ իր հոգւոյն մէջ, ամբիժ ցանկութեան մը յետին ձաշակը, որ միւրութեան ջուրերէն զանի կը գանեցնէ և միշտ կ'ունենայ աչքի հայ ուած մը լուրեւայն համբարձիկ դէպ այն աղբիւրն ուրիշ ներելի եղաւ իրեն ըմպել միանգամս:

Քանի՛ գեղեցիկ է Տրոյայի տասամեայ ահեղ պատերազմին քով, և քանի՛ վաւժ, այն ներքին պատերազմը, ոչ նուաղ աղեկուր, որ Աթալայի ու Ռափայէի սիրտերուն մէջ կ'անցնի անխօսուկ, որոյ վրայ բնութիւնն է միայն ու Աստուած, և սիրոյ դափնին է միմիայն անթառամ, զի հոն հեշտութեան բուռն ու անսանկան կիրքերը կը մարտնչին ու կը յաղթվին վերջապէս և տեղի կուտան գերաշխարհիկ սիրոյ մը, ազատ ամենայն մարմնական աղտեղութենէ: Քանի՛ շնորհալի է Ռափայէի՝ Յուրայի սենեկին սեմին տոջը գետնամած մնալը, առանց ոտքը ներս դնել համարձակելու, և քանի՛ կը փոքրկանայ այդ սըրտառուչ տեսարանին քով՝ Յունաց յաղթանակով Տրոյա մտնալը ի շաջիւն զէնքերու կայծակնացայտ և ի զիւ յաղթական անիւներու՝ դիականց կոյտերուն վրայէն... Մարդս իր կիրքերուն գերի՝ դաղան դարձած, մարդս՝ սիրոյ կիրքը՝ յըզմալում փոխելով անըստուեր գեղեցկութեան, հրեշտակ դարձած:

Տե՛ս մէյ մը թէ բանաստեղծութեան հետ, գրականութեան հետ, արուեստներու և գիտութեանց հետ, ի՛նչ մեծ յառաջդիմութիւն ըրած է նաև բարոյականը Հոմերոսէն մինչև Լամաութին: Այս յառաջադիմութիւնն ալ քրիստոնէութեան կը պարտինք որ զ'ամենայն հոգւորեց, մինչև սէ՛րն ալ: Կուսալատ բանաստեղծներուն մէջ հեշտութիւնը միշտ նիւթական ու միշտ պիղծ և քրիստոնէոյ բանաստեղծներուն մէջ մաքուր ու հրեշտակային է: «Մէկդի թողունք այն հրեշ բանաստեղծութիւնները, կ'ընէ Վ. Հիւկօ, որոնցմով Անաքրէօն, Հօրատ, մինչև Վիրգիլիոս անգամ անմահացուցին լըրբենի անառակութիւններ ու ամօթալի սուլորութիւններ, հին և նոր կը-

ապագա բանաստեղծներուն սիրահարական երգերը, Բաթուլի, Թխուլի, Պէթեհի, Բառնիյի քերթուածները չունին ամենեւին այն փափուկ ազնուութիւնը, այն համեստութիւնը, այն զգաստութիւնը, առանց որոյ սէրը անասնական բնադր մըն է միայն և մարմնական խորութակ մը» :

Մեծանուն բանաստեղծին այս ըսածէն անանկ մը կ'երեւնայ թէ ըզՀոմերոս, Հայր Բանաստեղծից, այս բանաստեղծներու դասէն դուրս առած է :

Հոմերոս արգարե, նա որ ամենէն առաջ բանաստեղծական քնարին լարերուն վրայ զարկաւ և այնպիսի վսեմ ձայն մը և գերազոյն ներդաշնակութիւն մը դուրս հանեց որ իրմէ ետեւ ոչ ոք կըրցաւ այն ձայնին պատասխանել գիւցաղներգակ բանաստեղծութեան մէջ, Հոմերոս, այն կոյր մուրացիլը զոր գիտամ'մը գողցես յարոյց նախախնամութիւնը, որ այն մեր դուռերուն առջև լալագին դեղերօզ դասը յաւիտենական մե'ր մը ըլլայ մարդկութեան երեսին, Հոմերոս՝ որոյ պատկառելի ճաղատ ձևատը ձերմակ մաղերուն ներքեւէն միշտ պիտի փայլի այն երկնային բոցովը որմէ առկայծեալ երևակայութիւնը մարդուս մշտքին, նա մանաւանդ սըրտին մէջ կը փայլատակէ, Հոմերոս՝ մենք զայն ալ առանց յանդգնութիւն մը համարելու կը դասենք Հիւկոյի յիշատակած բանաստեղծներուն կարգը, և եթէ մեր կարծեացը նեցուկ մը պէտք է, շատ կը համարինք դեմէ հոս արդի նշանաւոր մատենագիր մը դատողութիւնը :

«Ի՞նչ մեր դարուն արժանի զգացում կը գըտվի Հոմերի դիւցազուններուն քով, այն վայրենի թագաւորներուն քով, մորթօղ, տապիօղ, խոհարար հովին առջև և սիրահար մեղրաջուր մը նետելէն ետեւ, իրենց ստրկուհւոյն զոր երեկոյին հայրական վառարանէն կը յափշտակեն ու յաղթական վրանը կը քաջըջեն կը տանին բռնի : Վայրի երէի զգացում կը դանեւ Հոմերի մէջ, կ'ըրբ օստուցիկ, սէր ըսպանման, կոտորածի, աւարառութիւն, գողութիւն, թշնամանք, նախատինք պարտելոյն, խաբէրայութիւն, վեղիւթութիւն, արբեցութիւն և նի'րհն արիւնհապարար շնագայլին իր էջին առնթեր : Յղիականը գառագե'ղ մըն է : Իրաւունք ունի Հոմեր որ անդա-

դար սըվի առիւծի կը նմանընէ, նըվի ադուեսի : Այս քղամիղեայ զանկասկանով մարդակերներուն համար, ո'յժը առաջին նա մանաւանդ մէկ հատիկ առաքինութիւնն է, արագ աչարժութիւնը փա'ռք մը, փախուստը ճարպիկութիւն, սուտը խելացութիւն :

«Տրովացի մը զիշերանց դէմը կ'ենէ Ռիսեսի, որ երկու բանակներուն մէջ մղար ոտքով կը դեղերէր, կը խօտանայ Ողիսես որ կեանքին վրաս չը հասցընէ, կը հրապուրէ, հետը կը տանի ու ետքն ալ անխիղճ կը մորթէ : Մէկդի ա'ռ այդ բանաստեղծութեան մէջէն այն անյերջանալի հագներգը, ուր աղեքսանդրեան չքեղ ոտանաւորներու մէջ անդադար իրար կը մեռցընեն ու կ'ուտեն, ի՞նչ կը մնայ Յիսականէն. — մարդուս հոգւոյն արձակած աղաղակներէն մէկ քանի աղաղակ միայն, զի, մարդս միշտ սիրած է, միշտ վիշտ քաշած ու միշտ ալ թըրթուռուկ նուագներու թարգմանած իր վիշտերն ու սէրը» :

Այս պատկառելի վկայութիւններով ոյժ առած, կը փափագէինք որ իցէ՛ թէ ձայներնիս զօրէր այն նորատի բանասիրաց դասուն որ հին քերթողներուն ետեւէն երթալով՝ միշտ Ոլիմպոսն ի վեր մաղելցիլ կը փորձեն, այն Ոլիմպոսն որոյ բարձունքը, թէ և ժմնին, գլխի-պտոյտ կը բերէ միայն իրենց : Զի շիտակը ձանձրացա'նք գիցաբանական անո'ւն մը դըմնելէն ուր մենք բանաստեղծական աւի'ւն մը կը բընտընէինք, ձանձրացա'նք առասպելին տասնադի քնարը միշտ տեսնելով մեր բանաստեղծներուն ձեւը, մինչ մենք մեր սըրտին թելերուն վրա կ'ուղէինք որ վարնէին, ձանձրացա'նք շատուածոց անհասկնալի լեղուն միշտ և անդադար լսելէն, մինչ մենք սըրտին բարբառը կ'ուղէինք լսել :

Կը փափագէինք որ մեր մէջ ալ բանաստեղծութիւնը իր հին ձեւը մերկանալով մարդանայ (եթէ այս բառով աւելի կը հասկըցվի մեր միտքը) և այն ատեն բնութիւնն ալ իր հրաշալեօքը և սէրը, այն որ միայն արժանին է նուագելու, սէրը՝ մարդուս կիրքերուն մէջ այն գերազոյն և հղօրագոյն կիրքը, իրաւամբ առնեն զրականութեան մէջ այն տեղն զոր աստուածութիւնը և երկնային վիպասանութիւնը յափշտակած էին :

«Վիպասանութիւն ընդ վիպասանութիւն , երկնային վիպասանութեանց տեղն անցնող մարդկային վիպասանութիւնն ալ կեղծիք մըն է , ըսեն հիմայ դուցէ , և բանաստեղծութիւնը՝ որ մոտքին ըստեղծելու կարողութիւնն է , երեւակայութեան արդիւնքը , ե՞րբ և ո՞ւր եղելութեան մը , խիութեան մը ցուրտ ու ճշգրիտ նկարագրութիւնը կրցած է ըլլալ : Բանաստեղծ մը՝ որ չը վառիր երեւակայութեամբ և չը վառէր ընթերցողը , տեսլա՞ծ լավա՞ծ բան է . այո՛ , անհետեւի սքանչելիք , խօսքերուց , խեղճե՞ր ու մտքէ վեր բաներ , ահա . ասոնց վրա կը դառնայ բանաստեղծութեան ոսկեգօծ աշիւը : Խոնջպէս կ'ուզի Որիպոսէն իջեցնել ու երկրի վրա սողացնել ա՛ն որ իր բնութեամբը միշտ բարձրերը կը թըռչի : Անցա՛ն այն ատենները , կը զրուցեն , ուր ամենուն այն ատենները , կը պարզուի կախարդէր , կը յալիւտակէր , հիմա մարդկութեան խորհրդածելու տարիքն է , աղայական երազներու ատենն անցած է : Այո՛ , անցան այն ատենները , կ'ընդունինք , և ահա՛ ատոր համար բանաստեղծութեան ալ անցած է ատենը . մարդկութեան լեզուն իր աղայութեանը՝ բանաստեղծութիւնն էր , չափա-հասութեանը՝ իմաստանիրութիւնն է» : —

Չէ՛ , բանաստեղծութեան ատենը երբէք չէ՛ անցած : Բանաստեղծութիւնը չը մեռնիր . անի՛՝ աննիրթական ու անմահ ինչ որ կայ ի մարդ , այն ամենուն բարբառն է , անի՛՝ այն սրբազան հոգին է որ միշտ անչէջ կը մնայ , և տե՛ս , նախախնամութիւնն ալ աւմեն դար մէջ մէկ հանձար կը նետէ աշխարհիս երեսը , որ և ևս արծարծէ զայն հուրը : Քանի որ մարդը կ'ապրի , բանաստեղծութիւնն ալ սիրտի ապրի զանազան ձեւերու տակ . ձեւերը կը հիմնան , կ'անպիտանան , կը մեռնին և բանաստեղծութեան հոգին անմահ կը մնայ , և նոր ձեւերով նորէ նոր կը մարմնանայ , նոր գօրութիւն , նոր կեանք , ու նոր ազդեցութիւն առած : Դո՛ւ որ արդի ժամանակներու մէջ Նդիականին կամ Ոգիականին հաւատար գալու զիցաղներդութիւններ չը տեսնելով , Երեմիայ ողբը կը կարդաս բանաստեղծութեան զուլայ , և կը կարծես թէ Հովբոսը ու Վիրգիլիոսը իրենց հետ թաղեցին բանաստեղծութիւնը , այն զօ-

րութիւնն որ Լամարտին ճարտարութեան պահպան հրեշտակը կը կոչէ , աչք մը նետէ նոր դարերուս գրականութեան վրա , այն մեծամեծ բանաստեղծներու շարքին վրա , համբէ՛ կըրնաս նէ , Շէքսպիրու , Բոուէյլ , Ռասին , Մօլիէր , Ալֆիէրի , Վալթէր Լսթօթ , Թասսօ , Միլթոն , Բլոքսթօք , Պայուէն , Շիլլեր , Լամարտին , Վ. Հիւիօ , Մէնծօնի , Կէօթէ , Շաթօպոսիան , Պեռանտէ , Ալֆրէտ ար Միւսէ , Էն. Էն. Էն : Բանաստեղծութեան այս լուսափայլ ու սլայծառ ճաճանչներուն առջեւ , Խոնջպէս մարը մտած կը հըռչակեն զանի՛ . . . :

Վիպասանութիւնն ալ շատ անդամկեղծիք մըն է , այո՛ , բայց իր վախճանը՝ բարոյական կամ ընկերական ճշմարտութիւն մը կեղծեաց վարագուրին ետեւէն ամենուն ցուցնելն է . կեղակարծ եղելութեան մը տակ՝ կեանքին խիութիւնները , բնութեան պատկերը , մէկ խօսքով ըստող նկարագիրներ կը ներկայացնէ : Վիպասանութիւն մ'աշխարհի խորհրդագրեցիկ տակերոտիպն է :

«Նուազ կեղակարծ քան ըզդիւցաղներդութիւնը , վիպասանութիւնը (Ռօման) ու եղերերդութիւնը (Տռամ) անոր յաճորդելով՝ աւելի մօտեցած են իսկական զգացմանց ու բարուց» զօրօրինակ կ'ըսէ արդի մեծանուն մատենագիր մը , որոյ խօսքը օրէնք է դողցես դրականութեան մէջ :

Մեր ազդին քիչ-շատ ծանօթ վիպասանութեանց վրա խօսելով , Թափառական Հրեան՝ մեր ըսածին իբր օրինակ կրնայ ընծայուիլ , որչափ ալ ռամկական աւանդութեան մը վրա հիմնեալ՝ անդոյ էակներու միջնորդութեամբ կարգէ դուրս եղելութիւններ կատարել տայ , այնպիսի էակներ՝ որոնց պատմութիւնն ու խաղցած դերը անհրնարին ու բոլորովին երեւակայեալ է :

Ընկերութեան վիճակը վեր ու վար ու ամեն կարգի մէջ իսկական դէմքերով աչքի առջև կը տեսնի հոն : Թշուառ ու ողորմելի Լա Մայեօն , հոգի սիրարուս տձեւ ու անձոռնի մարմնոյ մը տակ , իր սիրելի Աբուլքօլին հետ , սիրտ աղնիւ ու եռանդո՛ւն , դործաւորաց դասը կը ներկայացնէ , միշտ աշխատաւոր ու միշտ չքաւոր . արին ու հաւատարիմն այն Տալիսպետ , որ վրնուորական առաքինութիւններու հետ սղընձէ

կուրծքին տակ քընքուշ ու գլխոտ սիրտն ու Ռօդ ու Պլանչին վրա խնամք ու խանդաղատիքը մարդս կը հիւսցնէ . աղջկունք սիրունք , անմեղութեան երկերեակ տիպարներ , հանապաղ գարշելի դատաճանութեան մը զոհ . սիրալուռ ու խանդակաթ Ստոբէն օրիորդը , լի գեղեցկութեամբ , բարութեամբ ու խեղճով , և իրեն ընդդէմապատկեր՝ Տիկին Սէն Տիգրէ իշխանուհին , Լօյօլայի ճըլմարիտ աշկերտուհի , որ ամօթալի ու լըբբենի կեանքին մնացած օրերը երկիւղած և սուտ բարեպաշտութեամբ չար և պփղալի գործառնութեանց կ'ընծայէ , հոգի մախացող սիրտ դառնացող Գաբրիէլ քահանայ հրեշտակային , սիրտ սո՛ւրբ , հոգի աներկիւղ . Ռօտէն կամ Բելիար քահանայի հագուստով . Նինի-Մուլէն կամ Տիւ-Մուլէն՝ գրիչ ծախված ու կեանք խառնադնաց , ստամոքսը Պաքսոնի նուիրած՝ և գրիչը Պապին . մինչև ժաք Ռէնըրօն՝ մերկապառակ անառակը , մինչև գազան Մօռօքն ու մարդախոշոք վայրենին , մէյ մէկ իրական անձեր են ընկերութեան մէջ , շատ քիչ ամեն տեղ կը տեսվին և իրենց գոյութիւնը ոչ ոք կրնայ ուրանալ , մինչդեռ Աքիլէսի , Իգօմիլնի , Ակամմիօնի , Այաքսի նկարագիրները Ոլիմպոսի բնակիչները միայն կարենան դուցէ ըմբռնել :

Ասանկ գրված վիպասանութիւն մը կեղծիք չ'է , այլ հայելի՛ մըն է ուր ընկերութիւնը յայտ յանդիման կ'երևնայ իր բոլոր գոյներովը . տառապեալ գասն ու վարթամ գասը , առաքինին ու մօլին , ճամբրիտ քըրիստօնեան ու անօրէն լոյօլեանը , ագեղն ու գեղեցիկը , բարին ու չարը , երբէմն մէկ գէմբի վրայ միացած : Եւ այս մեծ ու շահագրգիռ տեսարանէն ի՞նչ օգուտ մարդկութեան , ի՞նչ . — Սա բառաւորային պատուիրանին աղքատ քարոզութիւնը ընդբոլոր աշխարհ թէ «Միբեցէ՛ք ամենքդ ալ իրար» , և սա խորամանկ ու անիրաւ առածին խայտառակութիւնը թէ «Նպատակն ըզմիջոցը կ'արդարացնէ» իր է՛ն սոսկալի հետեւանքներովը հանդերձ : Ճընշեւոց և հարստահարեւոց դաս մը , որ կ'ըսկըսի իր իրաւաւանց մասն ունենալ ընկերական կեանքին մէջ , և Լօյօլեանը որ կ'արտաքսին մինչեւ Ռոստոյ սահմաններէն ալ :

Հոս պահ մը կանկ առնենք : Գիտենք

որ ինքզինքը խղճահար անուանող կողմը , խաւարի կողմը , յառաջդիմութեան թշնամին , մաշէրը պիտի ցըցուեցնէ ու գայթակղութիւն աղաղակէ , երբ մենք Ադգին օգտին համար դրական խորհրդածութիւն մը կ'ընծայենք Ադգին . անի՛ միշտ ասպարէզին մէկ ծայրը , ծառի մը շուքին տակ , կ'ըսպասէ անհանդարտ , ամենայն օգտակար մտածութեան վրա յարձակելու համար . գիտենք որ մէկ կողմէն ալ աւամիկը , միամիտը , դիւրահաւանը , այսինքն նախապաշարուն ու ագիտութիւնը ունինք առջեւ . նիս որ մէկ բերան պիտի կանչվուտեն թէ « Վ'Աղգը յ'որոգայթ կը հրապուրենք » — մինչդեռ մենք կառապաշտութեան տեսարաններէն մարդկային կենաց ու ընկերութեան տեսարանին կը հրաւիրենք Վ'Աղգը . — Անոնք որ ասոր անոր գրքատուէրն բարեպաշտ այցելութիւն մ'ընելով Ռօման , հայերէն ֆիլասոֆիան լաված գիրքերը , մէջը «Երահարս» քիւն գըտված բոլոր գիրքերը , ուրիշի հոգւոյն վերկութեանը համար վերցնելով դըրքատուէն , իրենց գրքատուը ճոխացուցած են դուցէ անոնցմով , առջեւնիս լըկաի ու աներես Ռօմաներ պիտի նետեն , իբրը թէ մենք անոնց վրայ խօսել ուղէինք , կամ թէ անոնք արժէին որ մարդ Եղիականին դէմ ի պայքար հանէ : Այդ տեսակ վիպասանութիւնները՝ մենք զանոնք ոչ երբէք կը դասենք արդի բանաստեղծութեան կարգը և ոչ ալ կ'ուզենք որ արվին իբր օրինակ նոր սերունդին ձեռքը : Արօնդով ու բարոյականով սպականեալ անցած դարի մը անհամ պտուղներն են անոնք կամ չորցած գեղընցած տերեւները որ աղմկին մէջ պիտի կորուսվին . Հիւսօ՛ հաւասար հիներուն զանոնք ալ Աստաղա կը կոչէ :

Մենք եթէ մէկ կողմէն նոր սերունդը նոր մատենագրութեան ընթերցմանը կը հրաւիրենք , միւս կողմէն չ'ենք ուզեր որ անփորձ և ահաս պատանիք գլխիկոր մըտնեն թեթեւ ու լավիչ գրութեանքներու 'ասպարէզին մէջ , որոնք բարոյականն աւերու ու կրօնական զգացումը տկարացնելու ծառայեն : Զի անոնք ոչ ախորժակ կը կըրթեն , ոչ զերեակայութիւնը կը վառեն , ոչ կը յափրտակեն , ոչ ալ ճաշակ մը կրնան տալ բանաստեղծական գեղեցկութեանց , զի ամենայն սուրբ յափշտակութեան աղբիւրը

կը շորցընեն և Գեղեցիկին դադարաւոր կը ջընջեն, որոյ միմիայն աղբիւրն է Աստուած :

Գեղեցիկին ու բարին պէտք է ըլլան միշտ նպատակ վիպասանին, և տգեղն ու չարը միշտ իբրև միջոց դործածուին՝ աւելի դուրս ցայտեցընելու համար առջինին դերապանցութիւնը : Այսու ամենայնիւ՝ թէ և այն կոյր մոլեռանդներէն չենք որ մէկ բառի, մէկ հատուածի համար ամբողջ դործ մը կը դատապարտեն, սակայն ի բնէ ի կրթութենէ միշտ կը ցանկանք որ, թէ վտարձութեան համար ըլլայ և թէ վարժութեան համար, մարդ միշտ իր ընթերցմանը մէջէն բարեպաշտ և սուրբ ելնի քան վառաճիւնն, վասն զի, ըսենք հոս մեր կարծիքը ամբողջ որ լաւ մը հասկընան ընթերցողք, վասն զի այս վաղանցուկ ու խաբուսիկ կենցաղին մէջ, ափսոս, ի՞նչ ուրիշ իսկական բան կայ և մնայուն քան ըղբարոյականը, և ի՞նչ խեղկատակ բան կ'ըլլայ, առանց անխափան թեստութեանը, այն անուրջն որ կեանք կը կոչենք . . . :

Մեր կարծեօք՝ վիպասանութիւն մը որ բարոյականին պարտուպատաճ մեծարանքը կը զլանայ, վիպասանութիւն մը որ մոլութեան բագին կը կանգնէ և խենեղանքն ու ցոխութիւնը կը խնկարկէ, անարժան է կարգացման և անկարող ընթերցողին շահը գըրգռելու . ի՞նչ կարեկցութիւն կըրնայ ըլլալ, ի՞նչպէս մարդու սիրտը կըրնայ եփիլ երբ տեսնէ երկու սիրահարներ ցած կիրքերու գերի եղած, իրենց սէրը միշտ փոխանակելով՝ ստակի հետ, գեղեցիկութեան հետ, աստիճանի հետ : Վիպասանութիւն մը՝ որուն մէջ սիրահարութիւնը այս տեսակ պատմուած է, մոլութեանց ու աղուխանաց տեսարան մը կը բանայ . այս տեսակ սիրահարութիւնը կը նըւատացնէ ըղբարդ : Իսկ երբ ինչպէս Ռաֆայէլի մէջ, սէրը գեղեցիկին զգացումն է, որ բուռն կիրքերու ետեւէն զանոնք կ'ուզէ, առաքինութեան ճշմարիտ աղբիւր մը կ'ըլլայ եւ մարդս կը բարձրացնէ :

Սէր՝ զոր պարտական կը կոչեն այլք, զոր հրեշտակներ կը կոչենք մենք, որուն էութեանը որչափ ալ չը հաւատն նիւթականք, կայ և արարչին առ արարածը էն գեղեցիկ պարզեաներէն մէկն է :

Այս սէրը կրկին ի կեանք վերածելու յատկութիւնն ունի, ինչպէս կը տեսվի Ռաֆայէլի մէջ, զերիտասարդ մ'երկուուն տարու, թախծութեան պատանքին մէջ պըլլուած առաջուց դեռ չը մեռած, «Շուրթ դարձուցած զըռանքով կեանքի դառնութենէն, հոգի իր վրայ գալարված, մարմին յողնած մտածութեամբ», ինչպէս կը պատահի այս տարիքին ամեն զգայուն ու ամեն խոհուն պատանւոյ, ըստուէր մահուն կեանքին վրայ տարածուած . . . :

1857

Իւսկիւտար

Գ. Ս. ՕՏԵԱՆ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԽՈՍՏՈՎ ԱՆԱՆՔ

ԱՌՏԵՐ*** ՔԱՀԱՆԱՅ***

Անցեալ օր, երբ ոտքս եկաք իմ խոստովանանքս լսելու համար, խնդրեցի յետաձգել՝ իմ անպատրաստութիւնս առարկելով : Համարձակութիւն չունէի բերանացի խոստովանիլ ձեզ մեղքերս : Ահա դրով կու գամ ձեզ ներկայացնել հոգւոյս վիճակն :

Եւ նախ ի ձէնջ կը խնդրեմ, ո՛ր քահանայք, մի՛ այդքան նուատանաք : Դուք հաւատացելոց ոտքն այժմ կ'երթաք, ու փոքր միւս եւս հաւատացելոց ոտքն ալ պիտի ծօղք համբուրէք . կտակած կուտաք մեղ թէ՛ քան զմեզ աւելի հասարակ մահկանացուներ էք, դո՛ւք որք կը կոշուիք Բարձրելոյն պաշտօնեայք :

Եւ ահա կը սկսիմ խոստովանանքս :

Ա.

Մարդ մը սպաննեցի՝ . . . Եւ այդ մարդն իմ ամուսինս էր . . . Եւ երբեք որ իր կիին այնքան չէր սիրած որքան ամուսինս զիս կը սիրէր . . . : Հո՛ն է հիմայ, հոգին տակ, որ իմ ձերմակ ծոցոյս չը տուած հանդիստն իմ ամուսնոյս ընդ միշտ պարդեալ . . . : Պէտք է որ ես անձամբ՝ ուսիս վրայ կրելով՝ մահու բլուրն հանեմ տապանաքարն, որ ամուսնոյս ոսկերց վրայ պիտի բարձրանայ . Պէտք է որ այնուհետեւ ալ օր առ օր այդ տապանաքարն իմ զգման արտասուքներովս

հալեցնեմ . . . : Ո՛հ, պէտք է՛ր որ Ղուկասյ կնոջ նման ես ալ քար կարէի և ամուսնոյս իբրեւ շիրիմ ծառայէի . . . :

Ձի ես դաշոյնի հարուածով մը՝ իւր անկողնոյն մէջ, իւր քնոյն մէջ, իւր հեշտագին երազոյց հրեղէն թեւերուն մէջ, չը ըստաննեցի իմ ամուսինս : Մէկ ձայնով չազատեցաւ նա, չը տեսնելով իսկ իւր սպանիչն : Ո՛չ դաշոյն, ո՛չ թոյն, ո՛չ պարան, ո՛չ դարան . այլ յայտնապէս, համարձակապէս, յամբապէս սպաննեցի խեղճ իմ ամուսինս . . . :

Այն առաջին օրն երբ զիս տեսաւ, կարմրադոյն հանդերձ մը հագած էի : Խորհրդաւոր աղբարարութիւն մ'էր այդ, զոր չիմացաւ . հրեշտակ կարծեց զիս, որ պիտի ըլլայի դահիճն այն զգայուն, սիրուն, զուարթուն երիտասարդին . . . : Նա որքա՛ն կը սիրէի զայն . . . : Խնք սեւ զգեստ կը կրէր այն առաջին երանիկ օրն : Որքան հակակիր էին մեր հանդերձից գոյներն, ա՛յնքան միմիանց համակրեցան մեր սիրալիր սրտերն :

Սիրին մէջ խիճ մը կար — հանդիպեցանք նա ծովափի մը վրայ ուր կը ձեռքէր առնաձինս . — հասարակ քաղաքավարութեան պահանջմամբ՝ պարտէ՛ր յանդգայս ձեռքէն սահեցնել քարի կտորն : Ո՛չ, ընկերութեան չը մատոյց այդ յարգանքն . ընդհակառակն, յաճախ կը նայէր խիճին, որպէս թէ քարացեալ այն ծովու փրփուրն՝ ըլլար աղամանդ կամ դո՛շար : Նա այդ խիճէն դողցես կը ներշնչուէր, երբ բանար բերանն ու խօսէր :

Նոյն իսկ այդ խիճն ուր ուրեմն եղաւ ընկերութեան համար խօսակցութեան նիւթ . իմաստասիրական վիճաբանութիւն մը բացուեցաւ, որովհետեւ ընկերութեան մէջ կային ուսեալ անձինք երկու սեռէ : Նրբամիտ և աշխոյժ պատանի մը — Բարիզէն նոր վերադարձած — համարձակեցաւ կասկած յայտնել թէ՛ արդեօք համայնաստուածեան չէ՛ր այն համակրելի երիտասարդն, ոյր աչկունք երկիւղածօրէն յաճախ խիճին վրայ կը կտտէին և որ գուցէ գաղանի կ'երկրպագանէր աւաղին և պետիկն, աստեղց և այն աստղավառ . . . : Ահապէս երիտասարդն ինձ նայեցաւ բնորոշ մամբ, և մեր աչկունք իբրեւ հրուսեալ եղբարք որք երկար տարիներէ յետոյ յանակնկալ զիբար կը գտնեն պատահմամբ՝ այնպէ՛ս ընդ միմեանս դրկա-

խառնեցա՛ն . . . : Պատանին՝ որ ներքին դուհունակութեամբ մը նշմարեց այս սիրավառ ակնարկներու փոխանակութիւնն՝ իւր աստղաձա՛ռ ածականին բուն գոյականն անպատշաճ դատելով անշուշտ արտասանել, ասպակիի կտոր մը նշմարեց որ կը փոքրիկէր գետինն, աստղի մը նման՝ և լրացուց իւր խօսքն՝ ըսելով քիճիծաղով . « և այս աստղավառ ասպակիին » : Հարմայ — այն վայրկեանէն իմ սէրս, իմ կեանքս, իմ ողջակէզս, իմ մահս, — յուզեալ էր անբացատրելի կերպիւ՝ ահաբեկ է ըսել :

Ձարաճճի պատանին — որ իւր խօսակցութեանց մէջ հրախաղութիւններ ու մարմնավարդական ոտուճներ կ'ընէր — թողլով Հարմայն իւր անպատուած յուրան մէջ, ներկայից առհասարակ ուղղելով խօսքն՝ հետագայ կերպիւ շարունակեց . « Ձարմանալի՛ բան . հասուն մարդկութեան դաւանանքն նոյն է՝ մանուկ մարդկութեան դաւանանքին հետ . նախնական մարդիկ կը պաշտէին նիւթը, և իննեւտաներորդ դարու զարգացեալ մարդն ալ կը պաշտէ նիւթն . . . » Ներշնչեալ կերպարանօք մանկամարդ տիկին մ'ընդհատեց անհամբերութեամբ . « Այն ներք, պարոն . ո՛չ նախնական մարդկութիւնն եղած է նիւթապաշտ, ո՛չ իննեւտաներորդ դարու մարդկութիւնն . որքան ալ յետս ընկնի՛նք ժամանակին մէջ, հանապաղ կը գտնենք առ մարդիկ ողիներու հաւատքն ու պաշտօնն . և որքան յառաջ ընթանանք ժամանակին մէջ, այնքան առաւել ի մեզ պիտի զօրանայ հոգեոյ անմահութեան հաւատքն . . . : Նիւթ, հիւլէ, յաճախ կը յեղյեղենք այս անուններն . և իմաստասէր երիտասարդ մը դուցէ կ'երապէ Հայոց մէջ նորոգել Ատոմական կամ Հիւլէական դպրոցն : Այլ միթէ գիտե՞՞ք կատարելապէ՞ս ի՞նչ է նիւթն, ի՞նչ է հիւլէն . վերածէ՛ նիւթն ու վերածէ՛ . վերածէ զայն իւր փոքրագոյն մասանց ու մասնիկաց, հուսկ ուրեմն ի՞նչ կը գտնեն . միթէ կը գտնեն » : Ո՛չ ազաքէն անթանճէն է որ՝ յետ ամենայն քննութեանց ու հետազոտութեանց՝ կ'ելնէ դէմք, և ըզբեղ կը շրթթէ, և ըզբեղ կը պախուցանէ, և ըզբեղ անբացատրելի կերպիւ կը յուզէ, և ըզբեղ այն գրից կը վերածէ, յորում սուրբ սեղանին առջեւ կը տեսնենք քահանայն՝ ահեղ խորհրդոյն կատարման ժամանակ . . . » :

Ինձ — և Հարմային — այնպէս թուեցաւ թէ այդ կիներն՝ ո՛չ նիւթապաշտ Բարիդեանին կարծիքն հերքելու համար կը խօսէր քան երդելու համար մեր սրտերու փոթիւնն և որորելու համար մեր սիրտանէջ հոգեոց ըզմայլումն . . . : Ամբողջ ընկերութիւնն ալ սքանչելի տպաւորութեան մը ներքեւ էր, բաց ի սիրուն սլառանիէն՝ որ անշուշտ անըզգայ չէր մնար հոգեպաշտ տիկնոջ պերճախօսական տաղանդին ու քնարերգական ձայնին, այլ որ Հարմայի ձեռաց խիճին կը նայէր ակնարկով մը՝ որ ըսել կ'ուզէր. « Իմ համոզումս կարծի է նման այդ խիճին և եթէ եւեքքրացուցիչ բանք ու մողիչ ակնարկք կարենան իսկ զայն ի փոշի վերածել, այդ անշնջելի փոշիներն իրար կը մաղնիսեն և կը վերակալմեն իմ նիւթապաշտական դաւանանքս » : Շարունակեց կիներն եղանակաւ խօսիլ : Անշուշտ քաղաքավարութեամբ՝ չը փորձեց Բարիդեան պատանին ընդդիմախօսութիւն ընել : Ուրիշներ ալ խօսեցան, այլ հաստատելու համար այն բարձր հոգեպաշտութիւնն զոր ոչ միայն խանդավառ ջատագովութեամբ մը կը պաշտպանէր հիւսնալի կիներն, այլ զոր կ'անձնաւորէր դողցեմ » :

Օրն երեկոյացած էր. և ալիք մանրացած էին ու ծովափին վրայ կուգային մեղմիկ ու մեղմալճիկ կը մարէին. ստուերք հետըհետէ կը տարածուէին ու կը ստուարանային. Ֆէնէրի լապտերին լոյսն նշմարելի կ'ըլլար : Մագնիս ունէր այդ լապտերն Հարմայի սրտին համար ա՛լ. անքակտելի միութեանց խորհրդաւոր վրայ մ'է դող այն անդնդոց լուսատուն : Միութիւնն արդարեւ կատարեցաւ այն երեկոյ մեր կոյս սըրտից միջեւ : Եւ վեց ամիս յետոյ մեր գլուխը ալ նոյն պսակին ներքեւ պիտի միանային, վրայդ Աստուած ունենալով և ըղմարդիկ, նաեւ այն հեշտագին ափանց ցայգալուսիկ պահապանն՝ որ փոթորկաց մէջ հանգրուան ցոյց կուտայ նաւուց, այլ որ, աւա՛ղ, անկարեկիր է հանդիսատես՝ մեր կենաց փոթորիկներուն . . . :

Բ.

Ահ, մեր միութիւնն նոյն իսկ դու նըւերադործեցիր, ո՛ր խոստովանահայր իմ : Նրթամբքդ ու ձեռքդ օրհնեցիր դու մեր պսակն. ու բարեբաստիկ ամաց վրայ մեղ

խօսեցար. ըստ քոյդ մաղթանաց ու դուշակութեանց պիտի գայի՛ն բարեբաստիկ տարիներն, հեշտաբար իրարու պիտի յաջորդէին բարեբաստիկ աւուրք մինչեւ ի խոր ծերութիւն՝ ուր մեր ալեւոր դիտոց վրայ տակաւին թարմ պիտի թրթուար սիրոյ սուրբ պըսակն : Ահա՛ միութիւն, ահա՛ երանութիւն, ահա՛ խաղաղութիւն, ահա՛ խոր ծերութիւն : Դեռ դիտոյս վրայ ձերմակ մաղ մը չունիմ, և ամուսնոյս դիտոյն վրայ քանի՛ սեւ մաղ էր մնացած, Աստուած իմ, երբ նա փարեցա՛ւ սեւ հողին . . . :

Ի՞նչպէս չը դուշակեցիր այս կարճատեւ միութիւնն, այս եղերական վախճանն, այս անլուր մարդաստղանութիւնն, և սոսկալուր խոստովանութիւնն որ ահա . . . : Բժշկի կը բաղդատեն ըզձեզ, ո՛ր քահանայք. և մեր այնպէս կը հաւատանք որ՝ երբ պատարագէք՝ ընդ Աստուծոյ կը խօսիք. արդ, երբ ձեզ կը ներկայանան երկու ծաղկահասակ էակք՝ յաւիտեան միանալու համար, երկու հիւանդք են նորա. դուք, հոգեւոր բժիշկք, ի՞նչպէս անկարող էք ճանաչել այդ արտացեւոյց արտն. ի՞նչպէս անկարող էք խմանալ իրենց ներքին արամաղրութիւնն ու դաղտնի դիտաւորութիւնն. ի՞նչպէս անկարող էք գիտնալ այդ երկու բնութեանց յարմարութիւնն և կամ անյարմարութիւնն. ի՞նչպէս անկարող էք մակարերել այդ միութեան հետեւութիւնն. ի՞նչպէս անկարող էք դեզ սահմանել իրենց արտից, և ի՞նչպէս մանաւանդ անկարող էք նոցա տիրաբար պատուիրել. « Բժշկուեցէք, և ապա ամուսնացէք » . կամ ստատել զնոսա. « Ձեր սէրն զգայական սէր մ'է միայն. դուք երջանիկ ամուսնի չովտի կրնաք ըլլալ. դժբախտ պիտ'ըլլաք դուք ու դժբաղդ ներ պիտի յաւելուք » :

Ո՞ր քահանայք, դուք անկարող էք ճանաչել մեր արտերն և դարմանել մեր վէրքերն. և այլ եւս չեմ հաւատար ես որ Աստուած ընդ ձեզ կը խօսի : Ձի եթէ խօսէր Աստուած ընդ ձեզ, իր խորհրդոց գիտակ պիտ'ըլլայիք յաւէտ. ամենազգետ և ամենակալ Աստուածն ի ձեզ պիտի բարբառէր և ձեզ պիտ'ըսէր. « Մի՛ հաւանիք այդ միութեան. մի՛ կցէք այդ ճակատներն՝ որոց մին սառած է արդէն. մի՛ թողուք վրդովիլ ընտանեաց խաղաղութիւնն, ուրկէ պիտի ծնանի խա-

ղաղութիւնն ընդհանուր աշխարհի » : Ահ, քանի որ կը խորհրդածեմ, սարսափելի խորհուրդներ մտայս մէջ կը խռնին ու կը խառնին, ո՛ր խոստովանահայրդ իմ. կը յուսահատիմ ես աշխարհի խաղաղութենէն, կը յուսահատիմ մարդկութեան ապագայէն : Կը գգամ, նաեւ, որ անկարելին ի ձէնջ կը պահանջեմ . . . :

Կանդորդառնամ՝ միւս կողմէն՝ ես իմ վրայ, և անդամ մ'ալ ես ինձ կը հարցնեմ թէ սիրած եմ : — Այո՛, սիրած եմ. առաջին օրէն մինչեւ վերջին օրն, այո՛, սիրած եմ ես իմ հէ՛ղ ամուսինս : Կը հարցնեմ ես ինձ թէ լաւ ուսում առած եմ. — Այո՛, կանոնաւոր ու հաստատուն կրթութիւն ըստացած եմ : Այդ հարցումներէս և այդ հաստատական պատասխաններէս կը հանեմ վերջին հարցումն. իմ սէրս և իմ կրթութիւնս ի՞նչպէս, ինչո՞ւ չարգիլեցին զիս՝ իմ ամուսինս սպաննելէ . . . : Իր պատկերն ամեն օր ծոցս պահեցի վեց ամիս, և ամեն ժամ դայն համբուրեցի : Եւ ի՛նչ համբուրելի ձակատ, ի՛նչ ազնուխոս հերպարան, ի՛նչ երաղուն աչքեր, ի՛նչ ծանրախոհ միտք, ի՛նչ սրտաղդեցիկ ձայն, ի՛նչ թափանցիկ սիրտ, ի՛նչ անթափանց հոգի. կը սիրէի դայն մարմնովս ու հոգովս : Վկայէ՛ դուն, ո՛ մարմար, որ ձակատուս հուրն և ահացս արտասուքն այնքա՛ն անդամ քաղած ու ծրծած ես. վկայէ՛ դուն՝ ի՛նչ սէր ունէի, ի՛նչ տաքնապներ կ'անցունէի՝ երբ թեթեւ անհանգստութիւն մ'իսկ ունենար հէ՛ղ Հարմաս . . . :

Այլ ընդէ՞ր չեմ դու պատասխաներ, ո՛ր քահանայ. Սէրս անհուն ու բոլոր իմ ուսումն՝ ի՛նչպէս և ինչո՞ւ թողուցին որ կաթիլ առ կաթիլ քամեմ՝ Հարմային արիւնն, որ յաճիւն վերածեմ այն հուրն . . . : Ըսէ՛, քահանայ Բարձրեւոյն. բարձր ձայնով ըսէ՛ որպէս զի բոլոր աշխարհ լսէ. ըսէ՛ թէ ես, ոյր մեղքերն այնքա՛ն թեթեւ կը գտնէի, ի՛նչպէս կըյայ տիեզերաց ամենէն մեծ ոճրագործն ըլլալ, ես զոր թերեւս երկրաւոր հրեշտակ մը կը նկատէի. չունենալով դաւակ, կողակից ու զաւակ էր միանդամայն ինձ համար այն սիրոյ, զօրովանաց և բազանջացման արժանի էակն. և ես ամուսինս ու դաւակս սպաննեցի մէկ ձեռքով : Օ՛ն, տուէ՛ք իմ քաջութեանս վարձքն. երկու կրծսս վրայ շողան թո՛ղ պատուանիշ խաչք . . . :

Գ.

Բայց ես մոռցայ հարցում մ'ալ ուղղել ինձ. հարցուցի «Կը սիրէի՞» և «Ուսեա՞լ էի» . և հաստատապէս «Այո՛» պատասխանեցի. չը հարցուցի թէ կատարեալ դատարարութիւն ընդունած էի . . . : Ըզճե՛ղ, ո՛ր խոստովանահայր իմ, ամբաստանեցի. թերեւս զԱստուած իսկ ամբաստանեցի. հիմայ պէտք է որ ամբաստանեմ՝ կենացս հեղինակներն ալ, ծնողքս ալ . . . : Որպէս զի խոստովանանքս ամբողջ ըլլայ, պարտիմ ամեն բան յայտնել, սիրտս լիովին աստանօր պարզել :

Մայրս, որ հաւատարիմ ամուսին մ'էր և որ առաքինի կանանց դասուն մէջ կը դասուէր, մայրս . . . բնաւ չիտրուեցաւ չէր վարուէր հօրս հետ. կարծէր նա թէ իրաւունք ունէր յարգուելու, և պարտք ունէր նախատելու. և նախատանաց կարկուտ կը տեղար հէ՛ղ հօրս գլխուն վրայ, ի ճահ կամ յանձահ. սովորութիւն ունէր ընդհանրապէս սեւ կոշիկ կաթն, երբ հայրս կը հիւանար կաթին սովորակութեան վրայ. կը յանդիմանէր հայրս թէ՛ մեծ հարստութիւն չէր դիպած՝ նոյն իսկ ապօրինի միջոցներով, որպէս կը յաջողին ընել ոմանք (չըսեմ բաղումք). կը զլտամբէր հայրս թէ չէր կըրնար բաղում լեղուններ խօսիլ և բաղում պետական անձանց հետ տեսնուիլ. կը ըստըգտանէր հայրս թէ՛ բարեխառն կեանք կը վարէր, թղթախաղի ակումբներ չէր յաճախեր, ծխախոտի և օղիի չէր սովորեր. մայրս . . . սպասաւորաց առջեւ անփոք, անզգայ կ'անուանէր հայրս. կը հեգնէր դայն. անանուն էակաց կը բաղդատէր և կը հաւասարեցնէր դայն : Հայրս դուն ուրեք կը պաշտպանէր զինքն. այլ քանիցս խնայած եմ դայն՝ աղաղակել արտասուելից ձայնիւ. «Ազնիւնդ չար օրինակ պիտ'ըլլաս. պիտի սպաննես Վարդուհին» :

Դ.

Հօրս երկիւղն իրաց ու. կատարուեցաւ, աւա՛ղ, բարի հօրս չար դուշակութիւնն : Ուսուցիչներէս և ուսման գրքերէս դրական ծանօթութիւններ ուսայ. բնութենէն — կամ երկինքէն — չէր ուսայ. բայց մօրմէս . . . անկրթութիւն ուսայ. մօրմէս ուսայ նկատել ամուսինս իբրեւ դերի, քմահաճոյիցս խաղալիկ ընել դայն, խորտակել ու խաւա-

րեւ իւր սիրտն . այնպէս վարուիլ Հարմայի հետ՝ որպէս թէ չըլլար նա տէրս , սէրս , գերադոյն բարիքս , գանձս , և պիտ'ըսէի Աստուածս . . . :

Եւ երբ կը մտածեմ թէ ինչպէս կարող էի խոչտանդել այն փափուկ էակն՝ որ իմ սիրտս իւր սիրոյն մեղրովն յարածամ կը լըցունէր . երբ կը մտածեմ , կը զարմանամ ու կը սոսկամ . և կը յիշեմ հէգ հօրս խօսքն . « Աղջիկդ պիտի սպաննես » : — Սխալ ըսիր . հայր իմ , մայրս իր փեսան պիտի սպանանէր , մայրս իմ ամուսինս պիտի սպանանէր . . . :

Այո՛ , խոստովանահայր իմ , մայրս ըսպաննեց իմ ամուսինս , իմ եղբայրս , իմ որդեակս , իմ Հարմսն . երկամեայ կենակցութենէ մը յետոյ՝ բաժնուեցայ յաւէտ իմանաւածանէ՛ր . . . Քաղցրահամբոյր էի մեղրալուսնոյն միջոցին . սակայն մայրս ընդ հուպ յիսարթընցաւ . բնութիւնն անհամբեր էր դործունէութեան մէջ մտնել և ի գործ դնել մայրական կենդանի դասերն : Անգիտակցաբար , մեքենաբար կը գործէի . հակառակ այնքան գգուանաց ու դորովանաց , վէրքեր կը բանայի խորճենկ խորճենկ . . . սրտիդ մէջ , ո՛վ իմ սիրականս , ո՛վ իմ նահատակըս . . . : Ա՛հ , է՞ր ամուսնացար . կենաց դպրոցին մէջ ուսած սրտակից մէկ բարեկամդ կը գրէր քեզ հետագայն՝ զոր այս առաւօտ միայն կարդացի հին թղթոցդ ծրարին մէջ . « Զգայուն և փափուկ կազմուածքդ ճանչնալով՝ ամուսնութիւնը օգտակար չեմ գտներ քեզ համար » : Ինչո՞ւ վորձառու բարեկամիդ չանսացիր . ինչո՞ւ զիս սիրեցիր . մեռնելու համար . . . ծաղիկ հասակիդ մէջ . . . : Բայց դուն այնքան զիս կը սիրէիր , որ եթէ քեզ անսուտ պատգամ մ'իսկ զեկուցանէր թէ մահուան հրեշտակն ես քեզ համար պիտ'ըլլայի — որպէս իրօք իսկ եղայ , — դու չը պիտի վարանէիր երբեք ինձ միանալ , ու ձեռքս մահանալ : Է՞ր զիս այդքան սիրեցիր , է՞ր զիս այդպէս սիրեցիր : Հաղար ու բիւր կեանքի համար , ժէք էր կեանքդ , և ես զայն շիջուցի . բուրովին սէր էիր , և դու միայն ինձ էիր . և ես մահուամբ հատուցի սէրդ . . . :

Եւ աշխարհ ահա նահատակէն աւելի դահիճին վրայ կը խղճայ . . . :

Կուգան իմ արտասուացս գին կարել .

կուգան իմ երիտասարդութիւնս ինձ դու վե՛լ . . . : Նամակ մ'իսկ ընդունեցայ . . . մխիթարակա՛ն . . . Այն չա՛ր սատանան , այն նիւթապաշտ պատանին՝ որ ներկայ էր Հարմայի հետ առաջին տեսակցութեանս և որ առիթ տուաւ — կրնայ ըսուիլ — մեր սիրոյն արտայայտման , այն հայ Տօն Ժուանն որ Հայ ընկերութեան ծոցոյն մէջ կը ծաւալէ բարիգեան վարդաբոյր ասպականութիւնն , այն գեղադէմ ու նրբամիտ պատանին որ կը դիւթէ կոյսերն ու կիներն . . . այն է , Տէ՛ր Հայր , որ կուգայ մխիթարե՛լ զիս . . . :

Ե.

Հողիս աննկարագրելի վիճակի մը մէջ գտնուի . կը զգամ թէ բան մը կ'աւելնայ յիս ու բան մը յինէ կը պակսի միշտ : Ի՞նչ է այս մակընթացութիւնն ու տեղատուութիւնն , որ գրէթէ միանգամայն կը կատարուի , Տէր Հայր . ի՞նչ է պակսածն , ի՞նչ է յաւելցածն . . . : Հարմաս պիտի մօրմէս երթամ սրահանջեմ . այդ Տօն Ժուանն ալ պատիւս պիտի սրահանջեմ . և քենէ , պաշտօնեայդ Աստուծոյ , ներումս պիտի պահանջեմ : Պիտի տա՛ն ինձ թողութիւն : Եթէ մերժես , օր մը Սրբութիւն Սրբոցին վրայ պիտի տեսնես կնոջ ձեռք մը որ կը դողայ և նուրբ երկաթ մը որ կը շողայ . և այդ դողդոջուն ձեռքն , այո՛ , պիտի դողացնէ բոլոր տաճարն . . . :

Եւ ահա կը կնքեմ խոստովանաքս , վերջին անգամ մ'ալ կը խնդրեմ ներումդ , ո՛ Հայր , առանց սակայն յուսալու թէ ներումս հոգիս պիտի խաղաղէ : Միշտ բան մը կը մտնէ ներսիդիս , ու միշտ բան մը դուրս կ'ելնէ ներսիդիս . չը գիտեմ ինչ է մտածն , ու չը գիտեմ ինչ՝ ելածն . ա՛յն միայն գիտեմ թէ կեանքն ինձ համար անտանելի լուծ մը կը դառնայ . . . : Կը մթնանա աչքերս , և պատկեր մը կը տեսնեմ միայն : Այդ պատկերին մէջ քովէ քով կը տեսնեմ մայրս՝ դաշոյն մ'ի ձեռին , Հարմաս՝ ահագին խաչ մ'ուսին վրայ , Տօն Ժուանն՝ նեկտարի բաժակ մ'ափին մէջ , և Աստուած՝ որ ծալած է թեւերն ու կը մտնուայ . . . :

ՎԱՐԴՈՒՀԻ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԻՆ . — Վախճանեալ քահանայի մը թղթոց մէջ գտնուած է սոյն « խոստովանաքն » , զոր հրատարակութիւնն ո՛չ անպատշաճ , ո՛չ անօգուտ դատեցի — ջնջելէ յետոյ քահանային անունն և կնոջ մականունն :

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՏԱՍԹԱՅԷՎԱՍԻ ԵՒ ԻՒՐ ԳՈՐԾԵՐՆ

Ո՞վ է Տասթայեվսքի. — Կենսագրական տեղեկութիւններ. — Տառապանաց բանաստեղծը. — «Նոր» դպրոցը. — Գրականութիւնը քաղաքական տեսակետով. — Տասթայեվսքի յեղափոխական՝ առանց ուղեւ. — Ռուսական միտքեականութիւն. — «Խորհրդաւոր սոսկում». — «Գործնական» լինելու փափաքը Անիշխանական՝ առանց դիմադրու. — Հոգեկան հիւանդութիւն. — «Նուաստացեալք և թըշնամանեալք» և «Ոճիրն և Պատիժը»:

Ա.

1831 յունուար 28ին կը մեռնէր ի Բեդրասպուրկ մեծահոգի ռուս վիպասան Տասթայեվսքի (Ֆեոտոր Միխայէլովիչ) : Ժողովուրդը լացաւ անոր վրայ, ինչպէս լացաւ Աբդուլլէֆ զօրավարին վրայ : Մէկ քանի ամսոց տարբերութեամբ, երկուքին ալ կատարեցին մեծաշուք և նշանակութեան արժանի յուղարկաւորութեան հանդէսներ : Երկուքն ալ իրենց ազգին առջեւ կը ներկայացնէին, մին՝ դիւցազնութիւնը, միւսը՝ ռուսական միտքը : Իրենց յիշատակը խորաքանդակ դրոշմեալ է և պիտի մնայ ութսուն միլիոն մարդոց սրտին մէջ : Եթէ Աբդուլլէֆի անունը ծանօթ է մերաւնէից, չենք կարծեր որ Տասթայեվսքի անունը նոյնը եղած լինի : Եւ սակայն Տասթայեվսքի մին էր այն մեծ մատենագիրներէն որք ամենախորին ազդեցութիւն ունեցան իրենց հայրենակցաց վրայ : Արդէն Ռուսք իրենց վիպասանաց մէջ առաջին կարգը կը դասեն զայն, չատ վեր թուրկէնէֆէն որ կ'սկսի մոռցուիլ և թողութոյն :

Տասթայեվսքի տառապելոց և թշուառաց բանաստեղծն եղաւ : Իւր վէպերը կ'արտաշնչեն կսկծեցուցիչ տխրութիւն մը, և երբ նորա կենսագրութիւնը կարդանք, երբ մտաց առջեւ բերենք այն միջավայրն ուր նա ապրեցաւ, այն ատեն ինքնին կը հարցնենք թէ իրական կեանքը շընծայեր արդեօք եղբրական կացութիւններ, չատ գեր ի վեր քան զայն որոց ծնունդ կուտայ երեւակայութիւնը :

Ուշէն Գեօ Մանի վերջին թուոյն մէջ Պ. Էսօֆէն Մէլքիօր արը վսկիւէ հրատարա-

կած է մեծանուն վիպասանին սգատխուր և միտամած կենսագրութիւնն :

Տասթայեվսքի, քանի մը տարի բանակին մէջ անցունելէ յետոյ, զրադիւնական ասպարէզը մտաւ հրատարակելով իւր առաջին գիրքն, Թշուառ Ժարդէլը (1848), մինչ քսան երեք տարեկան էր : Այդ գիրքը վիշտ կը բուրէ, և իբր վերնադիր կրնար կրել սախօքերը զորս Տիէվուչքին զրած է իւր թշուառութեան ընկերներէն միոյն համար, որ բազմին մէկ նոր դառն հարուածը կրած էր. «Արցունքները կը վազէին աչքերէն. թերեւս առ վշտին չէր, բայց այդ պէս, ունակութեամբ, իւր աչքերը միշտ թաց էին» : Գորովալի գիրք, սրտէն ելած ի մի բղխին, Տասթայեվսքի անդ զրած է իւր բոլոր բընութիւնը, իւր հիւանդոտ զգայնութիւնը, գթութեան և անձնութեան համար իւր ունեցած պէտքը, կենաց իւր դառն հասկացողութիւնը, իւր դաժան և միշտ ցաւաւ գին հպարտութիւնը : Պէտքիսքի, ռուս մեծ քննադատն, ևս անդով ու ցնծութեամբ ողջունած էր երկտասարդ մատենագիրն ըսկըզբնաւորութիւնն, որ՝ բնատիւ հանձարով մը՝ կը չարունակէր այն իրապաշտ գործըն ում ձեռնարկած էր Կոկոլ : Այդ պահուն է որ Տասթայեվսքի մատ ունեցաւ քաղաքական դաւադրութեան մը մէջ, որոյ նըպատակը երբէք գիտցուած չէ, կայսերական շնորհով չորեքամեայ շղթայակապ աշխատութեան դատաւարութեան և Սիւլեւրիա զրկուեցաւ : 1849ին էր այդ, յունիսի աւուրց հետեւեալ օրն, որք սարսափ աղդած էին Եւրոպայ : Տասթայեվսքի սակայն կրցաւ ասլրիլ այդ խտտաշարշար ու տաժանադին տարիներէն վերջ և վերադարձաւ ի Ռուսիա : Պէտք չունինք երեւակայել իւր մարտիրոսութեան պատմութիւնը, որովհետեւ, օտար անուններու ներքեւ, թափանցիկ կերպիւ կը գտնուի իւր Յէշապիֆ Ժարդէլը գրքին մէջ, զոր գրեց երբ թիարանէն ելաւ : «Ո՛հ, կ'ըսէ Պ. Վոկիւէ, զրական յաջողութիւնն ո՛րքան բազմի ու անարգարութեան գործ է : Սկիւի Բէլիքօր անունն և գործը քաղաքակրթեալ աշխարհի շրջանն ըրած են, և դասական են ի Ֆրանսա. և այդ միւսնոյն Ֆրանսայի մէջ, բոլոր հոգակաց և բոլոր դաւադարաց այն մեծ ճանապարհին վրայ, առաջին անգամ պիտի

տպեն՝ ինչպէս իմացայ՝ անագորոյն և վեհ գիրք մը, որ շատ և շատ վեր է Լոմպարտացի բանտարկելոյ մը պատմութենէն՝ իւր արուեստի կատարելագործութեամբ, որպէս պատմուած իրաց սոսկումովը: Միթէ ուսական արցունքներն իտալական արցունքներէն նուա՞զ մարդկային են »:

Երբէք գրքի մը յօրինումն այնքան դժուարին չեղաւ: Պէտք էր խօսիլ այդ դաղտնախորհուրդ երկրին, Սիպերիոյ վրայ, որոյ անունը կարելի չէր դիւրաւ արտասանել այդ միջոցին: Դատական լեզուն իսկ փոխաբերական ձեւեր կը դործածէր այդ բառը չըսելու համար. դատարանը « յոյժ հեռաւոր երկիրներ » կ'աքսորէին յանցապարտները: Եւ քաղաքական հին դատապարտեալ մ'էր որ կը ձեռնարկէր այն փշալից ճանքէն քալել, այդ մարտը մղելով դժբաքնութեան դէմ, և կը յաջողէր յաղթանակաւ:

Տասթայէվսի գրած է բուժելու համար: Խոհեմ բայց անողորմ ձեռքով մը մեկդի առած է այն քօլն որ նոյն իսկ Ռուսաց ակնարկներէն կը ծածկէր այդ սիպերական դժոխքը, հեռաւոր մառախուղներու մէջ կորսուած:

Մեռելոց դռն յիշատակներն քսորական համար այն եղան, ինչ որ Թուրկէնէֆի Ուրդի մը պարտիկներն եղան ստրկութեան համար, այսինքն զանգակի հարուածն որ բարենորոգումները փութացուցած է: Այսօր յայտնի է թէ այդ զապրելի տեսարաններն այլ եւս հին պատմութեանց կարգն անցած են. մարմնական տանջանքները վերացուած են, և բանտային դրութիւնն այնքան մարդկային է ի Սիպերիա որքան յԵւրոպա:

Պ. տը Վոկիւէ, որ շատ անդամներ հանդիպած է Տասթայէվսի, հետեւեալ կերպիւ կը նկարագրէ զնա.

« Փոքր, վտիտ է, հատած և կորաքամակ՝ վաթսուն տափանագին տարիներէ: Բոլորովին ջիւղ է: Սակայն աւելի թառամած է քան ծերացած, և առանց տարիքի հիւանդի մը դէմքն ունի, իւր երկար մորուքով և իւր տակաւին խարտեալ մազերով, և, հակառակ ամենայնի, ունենալով միշտ այն « կատուի աշխուժութիւնը » որուն վրայ կը խօսէր օր մը:

Ձենք ուզեր աւելի խօսիլ Տասթայէվսի

կենսագրութեան մասին, բայց կէտ մը կայ զոր արդարեւ չենք կարող լռութեամբ անցնիլ: Ստիկա յաղթանակն է յուղարկաւորութեանն Տասթայէվսի, որ գիտակից կամ անգիտակից պատրաստողն եղաւ ոչնչակաւութեան: 1881 յունվար 28ի առաւօտէն իսկ, Բեդերսպուրկ ողջոյն համախմբեալ էր Պրասպէքտ մեծ փողոցին վրայ. 100,000 հոգի երկու կողմը կեցած էին այն ճանքուն, ուսկէց դադարը սրտի անցնէր, Երկաթագործաց փողոցէն ուր կը բնակէր Տասթայէվսի, մինչեւ սուրբ Ալէքսանդր Նէվսիի մենաստանը. 20,000 աւելի կը հաշուէին այն անձինք որ անոր կը հետեւէին: Առաւարտութիւնն անհանգիստ էր. կը վախար որ ահեղադրող ցոյց մը կատարուէր. գիտէին թէ յեղափոխական տարրեր առաջադրած էին զիսկն յափշտակել, և ստիպուած էին արգելուլ ուսանողներ, որք կ'ուզէին սեպերիական թիապարտին շղթայները տանիլ դադարին ետեւէն: Ինչպէս կը յիշուի, ոչնչականաց եղեռնագործութեանց տաք միջոցին կը պատահէր այս, և ամիս մը յետոյ կ'սպաննուէր Ալէքսանդր Բ. Կայսրն ուսմբի մը հարուածով:

« Ով որ յուղարկաւորութիւնը տեսած է, կ'ըսէ Պ. տը Վոկիւէ, հակապատկերաց երկիրը տեսած է իւր ամեն ձեւերուն տակ, բազմաթիւ քահանայք, որք աղօթքներ կը միմեջէին, համալսարանաց ուսանողներ, ուսումնարանաց փոքրիկ աշակերտներ, բըժըշկական վարժարանաց երիտասարդ աղջիկներ, ոչնչականներ որք կը ճաչցուն իրենց հաղուստին ու կեցուածքին այլանդակութիւններէն, այրերն իրենց ուսին վրայ ձգած վերարկուով մը, կանայք իրենց ակնոցներով և կտրուած մազերով. բոլոր գրական և գիտական ընկերութիւններն, կայսրութեան ամեն կողմերէն եկած պատգամաւորութիւնք, ծերունի վաճառականներ, մուշտակազգեստ զիւղացիներ, սպասաւորներ և մուրացիկներ: Եկեղեցւոյն մէջ կ'սպասէին պետական աստիճանաւորք, հանրային կրթութեան նախարարն և կայսերական գերդաստանէն երիտասարդ իշխանք: Դրօշակաց, խաչերու և սրակներու անտառ մը կը տիրապետէր այդ քայլող բանակին վրայ: Եւ ամբողջ կազմող այլ և այլ դասակարգերէ անձանց մէջ կը տեսնուէին

քաղցր կամ մահահամբոյր դէմքեր, լւին կամ դառն արցունքներ, աղօթքներ, ծիծաղներ» :

Յոյց տալու համար թէ Տասթայէվսքիի յիշատակը դեռ ո՛րքան խորարմատ մնացած է ուսս սրտերու մէջ, կ'աւելցնենք սա իրողութիւնն ալ: Վերջին թղթաբերով առնելած ուսական լրագիրքը կը ծանուցանէին մեզ թէ մէկ քանի օրէն, յունվար 28 ին, Բեդերսպուրկի մէջ գրական երեկոյթ մը պիտի կազմակերպուի, յորում մասնաւորապէս պիտի կարդացուին հանդուցելոյն հեղինակութիւններէն կտորներ: Նոյնպէս հանդիսաւոր հոգեհանգիստ պիտի կատարուի նորա գերեզմանին վրայ:

Բ.

Սակայն այսօր դպրոց մը կայ որ կատաղաբար կը յարձակի Տասթայէվսքիի վրայ. կը կոչուի նոր դպրոցն, և դառնութեամբ կը պախարակէ Նոստրադամուսի և Թշնամուսի հեղինակն, որպէս զԻսէմբի, որպէս զԹուրկէնէֆ և ամեն քնապաշտներն թէ ահագնոր վէպեր յօրինած են: Այդ նորեկներուն համար, պէտք է որ զիրք մը ընկերական Բրոքականտայի դործիք մը լինի. լաւ վէպերն առնո՛նք են միայն որ կ'ուսուցանեն և լաւ թատերգութիւնք անո՛նք են միայն որ կը քարոզեն. պէտք չէ լինին այլ եւս բարուց նկարներ, այլ ամենուրեք երգիծանք: Վարդապետութեանց ծաւալման մենամոլութեանէն բռնուած այդ նորադանդը դրական դործ մը իւր քաղաքական արդիւնքներէն միայն կը դատեն:

Ընդդէմ Տասթայէվսքիի այդ դայրոյթը բացատրելու համար պէտք է ուշի ուշով քննել իւր կենաց մի քանի կէտերը: Ըսինք թէ իւր հրատարակած առաջին վէպը, Թշնամուսի մարտիկը, մեծ աղմուկ յարոյց ընկերական գաղափարներով տողորուած անձանց մէջ և թէ աղատական երկտասարդութիւնն ողջոյն բարձրադասկ կը գուլէր նոր վէպը: Այդ կէ քիչ մ'ետք է որ Միպերիա արքայութեան դաւադրութեան մը մասնակից լինելուն համար: Այս դժնդակ փորձէն յետոյ մտքէն իսկ չ'անցուց դաւադրել: Ոչնչականութիւնն, որ նոր ծագում առած էր Ռուս ընկերութեան մէջ, կ'երեւաւայէր անտարակոյս թէ Թշնամուսի մարտիկը, 1849ի աղատականը, պիտի դար

իւր կարգերուն մէջ քարոզել ընկերային պատերազմը: Սակայն այնպէս չ'եղաւ: Տասթայէվսքի «ձգտումներ» ունեցող վէպեր գրած չէ երբէք: Զգացած էր թէ ուսս ժողովուրդը տիեզերական յեղափոխութեան առաքեալներուն համար «աւելի խուլ և աւելի խաւարամած պիտի լինէր քան ու է անտառ մը» և մերժած էր «Ճակիլընաթի» (1) կառքին անխնայութեան ներքեւ նետուիլ: Սակայն թշուառաց, նուաստից և խելայեղներուն համար միշտ անհուն գրթութիւնն ունեցաւ: Իւր դործերը մարդկային տառապանաց մահահամբոյր նկարներն են: Բայց այդ նկարք, թէեւ մարդանոնց մէջ զգայ հեղինակին յուզումներն ու արդահատանքը, զայրոյթ պատճառած են յեղափոխական ոչնչականաց: Այս վերջնոց համար, Տասթայէվսքի պահպանողական մ'է, ոճրագործ՝ ամեն տառապանաց վրայ լացած լինելուն համար, առանց ատելութիւն և վրէժանդրութիւն երդնու ընդդէմ ընկերութեան:

Բայց ադո՛նք աղանդի նախապաշարումներ են միայն, և Տասթայէվսքիի նկատմամբ ուսական կարծեաց մէկ ճգրիտ պատկերը տալու համար միայն կը յիշատակենք դայնս: Որովհետեւ եթէ այդ վէպերն հեռի են տիեզերական քանդման կոչում ընելէ, սակայն Ռուսիոյ մէջ չ'լիան դրքեր որ կարենան աւելի աղաւտովապէս պատրաստել բարոյական և ընկերական անխելամուծիւնը: Իրաւ է թէ Տասթայէվսքի երբէք այդ տեսակ դիտաւորութիւն ունեցած չէ. մարդկիզգայ թէ միտքական մ'է այն որ համբերատար կերպիւ կ'ընդունի նախախնամութեան կամքերն, համոզուած լինելով թէ տառապանքը սուրբ և հարկաւոր է: Բայց

(1) Անգլիական Հնդկաստանի բերդաքաղաքներէն մին, Պենկալայի ծոցին վրայ: Այդ քաղաքը նշանաւոր է իւր կրօնական հաստատութեամբ: Ասիոյ ամեն կողմերէն ամեն տարի իւր կուստունը կը դիմեն երկու միլիոնի չափ ուխտաւորներ: Իւր հանգիսաւոր տօներուն մէջ, Պրահմաները մեծ շքով կը պաշտօնեն այն ահագին կառքն որ իրենց աստուծոյն արձանը կը կրէ, և այն ատեն հաղաւորեալ չէ տեսնել բազմաթիւ մարեմանդներ որք կառքին անխնայութեան ներքեւ նետուելով կը ջախջախուին, համոզուած լինելով թէ այդ բարեպաշտ անձնասպանութիւն իրենց անդեմական փրկութիւնը պիտի ապահովէ:

նկարելով հիւանդութիւն որով կը տառապի ռուսական ժողովուրդն, անոր ծանրութիւնն աւելցուցած է . ոմանք, իւր գրքերը կարգալէ յետոյ, զգացած լինելու են յիմարութեան սարսուռի մը անցնիլն իրենց մարմնոյն վրայէն, որպէս թէ յիմարանոց մը այցելելէ յետոյ դուրս ելնէին :

Ռուսիոյ մէջ տեսակ մը ջղային հիւանդութիւն կայ, որ յիտուն տարիէ ի վեր անհամար զոհեր ըրած է : Այս խանդարումն յառաջ եկած է յանկարծական կռուէ մը ընդ մէջ միստիքական ցեղի մը հին բնազդմանց, և գործելու պէտքին՝ որ յեղակարծուստ իմն տիրած է նոր սերնդեանց վրայ :

Միստիքականութիւն . Ռուսիա միշտ ունեցած է զայն :

Տարածուած է այն մանաւանդ դարուս սկիզբէն ի վեր և ամենուրեք . ճանապարհաց վրայ, ժողովուրդն յարգանօք կը խոնարհի եւրոպական առջև, ընդ վայրայած և ջերմեռանդ խենդն, որուն «դպած է Աստուած» : Ամենուրեք կը տեսնես գերբնականի երկիւղն և խորհրդաւոր իրաց ծառան : Ամենամեծ հանճարներն անդամկէրած են իրենց ցեղին այդ տրամադրութիւնը : Կոյով մեռաւ մարմինն հատած պահեցողութիւններէ, ընհատութիւններէ, և բանականութիւնն ոչնչացած զառանցական պատրանքներէ : Թուրքոյ, Պարսկոյ և խաղաղութիւնն զրքին հեղինակն, խստամբեր ճգնութեան մը մէջ կ'սպրի և իւր ժամանակը կ'անցունէ կռիւներ շինելով զորս ասլա վաճառանոցին մէջ ծախել կուտայ : Նոյնինքն Տաթարէ վաքի, թէև այդ չափազանցութեանց մըլուած չէ, սակայն միշտ ըզգացած է գերբնականի երկիւղը : Նասասոյ եւ թշնամեակի մէջ խստութեան մէջ իւր տարօրինակ արհաւիրներն, իւր փափաքն ուսկանսն :

«Ասիկա ամենէ վատալի երկիւղն է բանի մը զոր չեմ կարող ճշդել, բանի մը զոր չեմ հասկնար, որ չգտնուիր իրաց կարգին մէջ, բայց որ ստուգապէս ամեն վայրկեան կրնայ իրականանալ իբր հեգնութիւն մը զոր կը նետես բանականութեան բոլոր փաստերուն երեսին. այդ երկիւղը կը ներկայանայ ինձ և դիմացս կը անկուի իբր անթխտելի, սոսկալի, աճև, անադորոյն իրողութիւն մը» :

Այդ երազատեա ժողովուրդն իւր անուրջին մէջ տեղ արթնցած է Նաբոլէոնի ձեռամբ և իւր միստիքականութեան մէջ տեղ՝ դրական սկզբանց միջոցաւ : Անտի ունեցած է հիւանդոտ սքանչացում մը զորութեան համար և երազէն դուրս նետուելու, գործելու, կռուելու, զբաղիլն լինելու անզուսպ պէտք մը : Շատերուն համար ցնցում մը չատ ուժգին եղած է . նորանոր տեսնանքները չափազանց յանկարծական եղած են : Հաւաստարակութիւնը խզուած է խնայականութեանց մէջ : Ռուսական հիւանդութիւնը՝ կամենալու անկարելիութիւնն, անօգուտ ճգանց յուսահատութիւնն է :

Վիպասանք յաճախ պատմած են պատմութիւնն այդ դժբաղդից, որք կամենութեամբ, այլ առանց աղքատութեան, մեծապանծ ձեռնարկի մը մէջ կը նետուին, և վայրկեան մը հանճարի պատրանքով իրենք զիրենք խաբելէ յետոյ՝ յանկարծ կը ռապակին սին անձնասպանութեամբ մը, կամ գուհիի ոճիր մը գործելով : Այսպէս անձնասպան կը լինի, Թուրկէնէֆի մէկ հիւանդի պատմութեան մէջ, Թէկէֆ տեղականը՝ որ թնդանօթածիդ զօրաց մէջ մտած Նաբոլէոն լինելու համար, ինքզինքն իրաւասահմանեալ և ճակատագրին ազդեցութեան ենթարկուած կը համարէր : — Այսպէս կենդանաւ կը լինի Կոյ երկիւղն վէպին մէջ Նէյտանօֆ, զգուած իւր վարդապետութեանց ծաւալման դառնութիւններէն, անզոր և անհաւատ իւր ճգանց ամբլութեան առջև : Այսպէս անմիտ մարդասպանութիւն մ'ընել կը մըլուի Տաթարէ վաքի Ռէիս և Պարսի վէպին դիւցաւը, Ռաքըլիքով :

Այս էակաց խնայականութիւնն, յորս ճգանց չափազանցութիւնը խորտակած է կամքին զսպանակները, ըստ հաճոյս ամեն պատահարաց և ամեն ցնորքներու կը խտտորի, անկարող լինելով դիմադրել դրդմանց և յետս մըլել թեւադրութիւնները : Յիմարութիւն չէ այս, որովհետև բանականութիւնն առողջ է : Նաւուն կեղևն ամբողջ է, կայմը կանգուն, առաջատան անվթար, այլ ղէկը խորտակուած է :

Տարակոյս չկայ թէ այդ ջլատեալ անձանց մէջ չէ որ ոչնչականք կրնան ժողովել մեծ եղեռնագործութեանց կարող գործի մարդեր : Բայց բոլոր այդ հիւանդներն,

այդ բոլոր տառապելիքներն որք, կամքին բայքայման մէջ, ճշմարտին և անարդարին զգացումը կորուսած են, ընկերային փըտումը կը պատրաստեն: Իրենց կէս յիմարութիւնն անպատասխանատու կ'ընէ զայնս: Իրենց տառապանաց զարթուցած արդաւանքները խիղճերը կը վրդովէ և խռնաւ չփութ կ'ընծայէ բարեոյն և ճշմարտին վաղեմի ճանօթութիւնները. որովհետեւ, ժառանգականութեամբ կամ տարափոխութեամբ, հիւանդութիւնն որոյ ծնունդը պատմեցինք, ամեն կողմ կը թափանցէ, կը ծաւալի: Մէկ երկու ամիս առաջ, եղեռնական մեծ դատի մը միջոցին, օրէնքագէտ Բփիլի մը՝ տղթոր Պալէնսքի՝ հոգեբան հիւանդներուն անպատասխանատու լինելն հաստատեց՝ անպարտ արձակել տալով յանցաւորն: Ռուսիոյ մէջ միայն կարելի էր չինել այդ նոր աստութիւնն, որովհետեւ սքանչելապէս կը բացատրէ այն հիւանդութիւնն որով կը տառապին ռուսական աճյաւն ուղեւորներ:

Ոչնչականք միշտ իբր անգիտակից օժանդակներ համարած են ամեն սեռէ և ամեն պայմանէ հոգեհիւանդներն:

«Ես գտնոք ամենն ալ հաշուած եմ, կը գոչէ Վէրքհովէնսքի դաւաղիրն՝ Տասթալյեւսքի մէկ գրքին մէջ. դատարարին որ տղոց հետ կը ծաղրէ անոնց Աստուածն և օրոցն, մեզնէ է. վաստաբանն, որ դատարարակեալ մարդաստղան մը կը պաշտպանէ՝ ապացուցանելով թէ իւր զոհերէն աւելի ուսեալ էր և թէ՛ ստակ ունենալու համար՝ չէր կարող չտպաննել, մեզնէ է. ուսանողք, որք գիւղացի մը կ'սպաննեն սըրտայուզութիւն մը զգալու համար, մերն են: Գատախաղն, որ դատարանին մէջ կը դողայ որովհետեւ բաւական ազատական չէ, մեզնէ է: Երբոք ալ դատարար անպարտ կ'արշալէն ոճրաբանները, բաւական մեղքէ վերաբերին: Կառավարիչք, բարձրագոյն, անոնք ամենն ալ մերն են. բաղմամբիւ են մերայինք, և ինքեանք իսկ չեն գիտեր... Ժողովուրդն արբելու է, մայրերն արբելու են, եկեղեցիք դատարի են...»:

Լաւ ուրեմն, այդ արբելութիւնն որ հին աշխարհն այնքան խախտու և խաբխուր կը ներկայացնէ Վէրքհովէնսքի շացեալ աշխարհն, ոչ որ նկարած է անոր սոս-

կումներն և արհաւիրքն Տասթալյեւսքի կարողութեամբ: Այդու է որ, առանց ուզելու, ինք, պահպանողական և օրթոտոքսն, յեղափոխականի դործ տեսած է: Որո՞ւ հոգ եթէ այդ տխրամած գիշերոյն արհաւիրաց և խորհուրդներու մէջ տեղ հորիզոնին վրայ կը տեսնուին նորածին գործի մը շողողուն. սլայծառութիւններն: Որո՞ւ հոգ եթէ Ոճէն և Պարթէ վէպին վերջին երեսին մէջ, Ռասքոլնիքով, Բփլէկուած, կը վերստանայ իւր բանականութիւնն եւ նոր կեանք մը կը վերսկսի: Գիրքը դոցելէ յետոյ, մարդ կը մոռնայ երկնից այդ լուսաշողող անկիւնն, եւ այլ եւս չմտածեր Ռասքոլնիքովի դարձին վրայ: Ինչ որ մտքին մէջ կը մնայ և կը պաշարէ զայն, աղիտաբեր դրամանց չարաշուք պատկերն է որք մարդն յոճարագործութիւն կը մղեն: Եւ այդ կսկծեցուցիչ իրականութեան ի հանդէս ածումը հիւանդութիւնը ծաւալելու բնութիւնն ունի:

* *

Բաւ կը համարինք այսքան տեղեկութիւններ տալ վիսպասնին նկատմամբ, և աւելի ճշգրիտ պատկեր մ'ընծայելու համար զայն կազմող տարօրինակ տարրերուն վրայ, կ'ուզենք խօսիլ իւր երկու հոգակաւոր վէպերուն մասին, Նոստրոյեւսքի և Թըշնաճանեւսքի և Ոճէն ու Պարթէ, որք վերջերս թարգմանուեցան Ֆրանսերէն լեզուաւ և որոց ընթերցմամբն կարելի է դիւրաւ դատել Տասթալյեւսքի հանճարոյն մեծութիւնը:

Երկարօրէն չսկսիլ խօսինք Նոստրոյեւսքի և Թըշնաճանեւսքի վրայ, ո՛չ թէ որովհետեւ այդ գործը շահեկանութենէ զուրկ է: Այդ վէպին դաղտնախորհուրդ հանգոյցներուն և մանուածապատ կնճիւղներուն մէջ տեղ, կը գտնուի լուրթեան դատապարտուած՝ վշտի մը բոլոր զսպուած չարժեւները, դաղտնածածուկ անձկութիւններն և խուլ ասպտամբութիւնն: Բայց Ոճէն ու Պարթէ, արուեստական աւելի կատարեալ գործ մ'է, և աւելի թոյլ կուտայ խորապէս հասկնալ Տասթալյեւսքի հոգին: Ուստի այդ վերջնոյն համառօտութիւնը սկսիլ զենք յաջորդ անգամ, թարգմանելով Ֆրանսական Ժոն-Բատիստ Գեյտ լրագրին վերջին թիւերէն միոյն մէջ երեցած զբաղատական յօդուածէ մը:

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ք

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Ա Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն Թ Ա Ն Գ Ա Ր Ա Ն Ի

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ Մատենադարանն, Ֆրանսացւոց Ազգային Մատենադարանէն յետոյ, երկու աշխարհաց մատենադարաններուն ամենէն գլխաւորը լինելով, օգտակար է մերթ ընդ մերթ նշանակել այդ երեւելի հաստատութեան մէջ կատարուած բարգաւաճութիւնքն: Գիտեմք արդէն թէ ընթերցասիրահան, որ Բանիժծի անուն իտալացւոյն յատակագծին համեմատ շինուած ու բացուած է 1857ին, երեք հարիւր քսան ընթերցողներ կրնայ պարունակել: Սրահին ձեւն է բլրորդի, կահաւորեալ է գրականերով որք, կեդրոնէն մինչև շրջապատն, երեսուն կարգ շարուած են, և որու վրայ կը բարձրանայ ձուլածոյ ու ապակեղէն դմբէթ մ'որ, քանի մը մատնաչափ միայն պակաս տրամագծով, կը հաւասարի Հռոմական Բանդէտին գմբէթին: Իւրաքանչիւր ընթերցող իւր տրամագրութեան տակ ունի, մէկ ու կէս մէգր լայնութեամբ տեղ, եղէգնեայ թիկնաթու մը, կաղամար մը, ծծիչ թղթէ ձեռնատեղի մը: Առաձիգ դրոգ մը ձգուած է ընթերցողին ոտից տակ և որ կը մեղմացնէ ոտնաձայնէրը: Սրահին օդափոխութիւնն ու ջերմութիւնը կատարեալ են: Լուսաւորուած է երկկտրական լուսով, որով ներքին է միազապատ օրերը բանալ Մատենադարանն և հանապազօրեայ հաւաքման տեւողութիւնը, նոյն իսկ ձմրան եղանակի մէջ, երկարել մինչև երեկոյեան ժամ եօթն (ըստ Եւրոպացւոց): Սրահին բոլոր շրջանակին վերեւ, մարդաչափ բարձրութեամբ դարակներ կանգնած են, ուր են ընթերցողի գրքերն, ընթերցողաց ձախակին թողուած, և որոց թիւը կը հասնի յիսուն հազարի: Սրահին կեդրոնը կը գտնուի գրքապետներու գրասեղանն որ, իբրեւ կարկառակոյտ պատուարէ մը, շրջապատեալ է աստիճանաւոր դարաններու շրջանակէ մը, յորում են ցանկին վերաբերող կրկնածալ հատորներն:

Այդ ցանկն արդարեւ աշխարհի վրայ գտնուած ամենակատարեալ ու ամենասլիտանի միակ ցուցակն է: Անոր մէջ կը բովանդակեն, հեղինակաց անուններու այբուբէնական տառերով, բոլոր գործերն անխտիր, որոցմէ կը բաղկանայ այդ փառաւոր մատենադարան: Առաջին ակնարկով, այնպէս կը թուի թէ նմանօրինակ կարգաւորութիւն մը չէ այնքան համաճարեղ, և թէ, նիւթերու կարգով պատրաստուած ցանկ մը նախամեծար պիտի լինէր: Բայց այս պարագայն երեւոյթ մ է միայն: Նիւթերու կարգով, եղած ցանկ մը յաւէտ ըստ հաճոյս պիտի բաժնուի անշուշտ տասն կամ քսան տարիներ, չառ պարագայից մէջ, պիտի բաւեն խափանուած տեսնելու այդ բաժանումն: Հոսկ յետոյ, ինչ ինչ հատուածներ յանչափս պիտի երկարաձգին և հետազօտութիւնք՝ եթէ ոչ անկարելի՝ խիստ դժուար պիտի լինին:

Ընդհակառակն, հեղինակաց անուններու շարքն յոյժ բնական ու բացորոշ է: Բաւական է, առաջագրեալ նիւթի մը վրայ, գիտնալ թէ ո՞րք են գլխաւոր հեղինակութիւնք, և զիւրաւ կարելի է յաջողիլ գտնելու այդ նիւթին վրայ խօսող մատենագրութեանց անուններն:

Հետեւաբար, թէ՛ իբրեւ աւանդ և թէ՛ իբրեւ գնոյ առնուած սեպակականութիւն, մէն մի մատեան՝ Անգլիական Բանդէտնը մտած պահուն կատարեալ և մանրամասն արձանագրութեան կենթարկուի առձեռն տարածուած նուրբ թղթակապի մը վրայ, որով կերպիւ իւր իւր պաշտօնական համադամանքը կը հաստատուի: Այդ թղթակապ, որ հեղինակին վերապահեալ թերթին վրայ իւր ժամանակագրական կարգաւ փակուցուած է, անմիջապէս ցանկին մէջ կը յաւելցուի, և այդ ցանկն այս կերպով ի տես դրուած է միշտ:

Աւելորդ է ըսել թէ, մէն մի հատոր ունի կարգաթիւ մ'որ կը բաղկանայ գլխաւորէ մը, համապատասխանող՝ գրադարակներու բաժանման մը, և կը բաղկանայ մանրագրէ մը, համապատասխանող՝ մասնաւոր հատուածի մը, նոյնպէս և կը բաղկանայ թուանիշէ մը, համապատասխանող՝ դարակի մը: Անհամար խնդրանաց վերաբերող տոմարներն ընթերցողին տրամագրու-

թեան ներքեւ են, ցանկերու յատուկ դասաներուն վերեւ շարուած իրերէ գրականներ: Բաւական է որ այդ տոմարաց միոյն վրայ գրուի հեղինակին անունը, գործոյն խորագիրը, գրքին կարգաթիւը, վերջապէս ի՞նչ պաշտօն ունենալու թիւն, յետոյ յանձնուի տոմարին այս պաշտօնին յատկացեալ պաշտօնէին, և ահա ամեն գործարագապէս կը կատարուի, միշտ տասն եւ հինգ կամ քսան վայրկեանի մէջ գրեթէ: Տոմարին առժամապէս ղիւանը կը պահուի, յետոյ ընթերցողին կը տրուի, փոխարէն ստանալով այն հատորն որ իրեն հաղորդուած է փոխադարձ: Բնաւ աւելորդ գըրւածք՝ չկան, ոչ ալ տալովակալի ու անօդուտ ձեւակերպութիւններ: Չկայ տղայական ու վշտացուցիչ կանոն մ'որ ո՛ր և է անվստահութիւն ներշնչէ ընթերցողին ուղղամտութեան, որն որ իւր ընդունելութեան տոմարն երկու երաշխաւորաց վկայութեամբն ստացած է:

Այս դրութիւնն աննման ղիւրութիւն մ'ունի, և ով որ առթիւ ունեցած է փորձել զայն, պիտի ստուգէ անոր բացորոշ գերազանցութիւնն միւս բոլոր դրութիւններէն: Անգլիական Լանքասթըրի վարչութիւնն բաղձալով որ այնչափ ազատական սովորութեանց վրայ տակաւին բարձրագոյն սովորութիւններ յաւելու, քանի մը տարիէ ի վեր ձեռնարկած է ապագրել իւր ցանկն, յորում պիտի կարենայ միանգամայն ղեղչել հատոր մը և բաղմապատկել ուրիշ հատորներ: Այս ձեռնարկ գրեթէ անհրաժեշտ դարձած էր, նկատելով որ օր քան զօր աճեցուն հրապարակը կը գրաւէր այդ կրկնածալ գործն ստուար: Հաշիւ եղած էր թէ, ներկայ ընթացքին նայելով, այդ ցանկն ի մօտոյ մինչեւ ինն հազար մատեան պիտի պարունակէր, որով հարկ պիտի լինէր առանձին սըրահ մ'անոր յատկացնել: Փոխանակ ձեռագիր վիճակին մէջ թողլու, մէն մի գրքի պաշտօնական հանգամանքն արտատպելով կը հաշուուի թէ, այժմեան երկու հազար հատորները դեռ եւս պիտի բաւեն մինչեւ երկու կամ երեք դար ստանալու մօտից մուտքն: Սմբողջ ցանկը մէկ անգամով պիտի կրնար տպագրուիլ, առ այս յատկացընելով 100,000 անգլիական ոսկի ծախք (2 միլիոն ու կէս ֆրանք): Նախընտրելի հա-

մարուեցաւ միմիայն տասն և հինգ հատոր հրատարակել ամ ըստ ամէ, որով կարելի կ'ըլլայ նաեւ ժողովրդեան ղիւրութիւն ընծայել այդ գրքերէն մէն մի օրինակ դնելու, համեմատաբար ղիւրագնի, և այս միջոցաւ իսկ մեծամեծ ծախքեր կը թեթեւանան:

Անգլիական Լանքասթըրի մէջ, աշխատաւորաց մասին եղած յոյժ գնահատելի բարենորոգումն է նաեւ, իրենց յատուկ սրահին մէջ, քանի մը գրադարաններու նորագոյն շինութիւնն, որք յատկապէս վերապահեալ են մասնաւոր մատենագրական գործառնութեանց: Գրավաճառութեան այս ճիւղը քանի մը տարիէ ի վեր մեծ յառաջդիմութիւն ըրած է Ֆրանսերէն, ինչպէս և գերմաներէն ու անգլիերէն լեզուաց մէջ: Սմեռնամեծ ղիւրութիւն է ձեռքի տակ ունենալ այսպէս, առաջադրեալ նիւթի մ'առթիւ, բովանդակ մատենագրութիւնքն այդ առարկային վրայ հրատարակեալ բոլոր գործոց, և այս միջոցն, այն մեծ ցանկին հետ միասին գործածուելով, գործոց աղբիւրներուն ամենայն արագութեամբ ղիմելու կը նպաստէ:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԲՈՒՆԻ ԱՄՈՒՍԵԱՅԵԱՆ ԱՂՋԻԿԸ

Հետեւեալ բանաստեղծական կտորն հաղորդած են մեզ, որ կսկծեցուցիչ տխրութիւն մ'ունի և այնքան շատ բաներ կ'ըսէ իւր պարզութեան մէջ: Մարոյ, մանկամարդ աղջիկն որ կը մեռնի և զոր բռնի ամուսնացուցած են իւր չտրած մէկ մարդուն հետ, սրտակտուր խօսքերով կը յայտնէ իւր վիշտը: Սրբէ այն երիտասարդն է, որուն հետ ամուսնանալուն արգելք հանդիսացած է իւր հայրը: Այս բանաստեղծութիւնն երեւալայական ծնունդ չէ, այլ քաղուած է այն մէկէ աւելի ամուսնական ղեղձումներէն, որք շատ կը պատահին դաւառաց մէջ: Մարոյ արդարեւ մեռած է 1880 ամսոյ լիետրուար 11ին ի Ննուս, իւր թողած տաղին մէջ անիծելով բաղդն, որ բաժնած է գինք իւր «խորոս» Սրբէն:

Մարէ (1) ջան, հոգուդ մատաղ, իմ տարտին
տէրման արէք,
Բոցն ինկեր սիրտս կու վառի, Պին կոլայ պաղ
ջուր բերէք:

Մարէ ջան, ես կու մեռնիմ, իմ տարտին տէր-
ման արէք,
Ես մեր երեցներ չիմ ուղի, վանքերուց վարդա-
սկեա բերէք:

Ա՛խ ափոյ (2), զալմ ափոյ, տխր որ իս մեռու-
ցիւր,

Ութ ոսկի պաշլըննապոյ ճանտարմով պսակեցիր:
Աղջիկներ, ձեզ օսիաթ (3), ձեր սրտի ուղածն
առէք:

Որ չտան ձեր սիրածին, թողէք հօր տնից փախէք:

Ես կուս գերեզման կ'իջնեմ,
Ձիմ արուն քննէ կու ինդրեմ:

Մարէ ջան, հոգուդ մատաղ,
Քուրէ ջան, հոգուդ մատաղ:

Բոցն ինկեր սիրտս կու վառի,
Պին կոլայ պաղ ջուր բերէք:

Իմ տէրտին տէրման արէք,
Պին կոլայ պաղ ջուր բերէք:

Գեղի երեցներ չեմ ուղի,
Վանքերէն վարդասկեա բերէք:

Ա՛խ մարէ, Սըքէն բերէք,
Չմեռած մօկ էլ տեսնեմ:

Տեսնեմ ու պաղնեմ մեռնիմ,
Ձիմ ճանդակ Պին կու թաղեցէք:

Ա՛խ Սըքէ, խորօտ Սըքէ,
Իմ տարտին ճարտկ սըքէ:

Երկթէ չարբի հագեր,
Պին կոլայ սարը ման արի:

Քո Մարոն ախր կ'մեռնի,
Էն սալի կողը կ'թաղեն:

Ա՛խ Սըքէ, խորօտ Սըքէ,
Իմ տարտին ճարտկ Սըքէ:

Չալմի (4) ձեռք եմ ինկեր,
Ու քեզ չի տեսած կ'մեռնիմ:

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

ՇԱՔԱԹԱԿԱՆ ԱՐՈՅ

19-23 ՅՈՒՆՈՒԱՐ 1885

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Անցեալ շաբթու կ'ըսէինք թէ մեծ անձ-
կութիւն կը տիրէր Սիւսարդ գնդապետէ

լուր առնուած չլինելուն համար: Վերջին
թղթարերով եկած լրագիրք կը ծանուցա-
նէն թէ Սիւսարդ գորավարի զօրագունդը,
գիւցաղնութեան հրաշալիք ի դործ գնելով,
կրցած է վանել ստուարաթիւ և քաջ թըշ-
նամույ մը բոլոր յարձակումներն, և Մէ-
դամիկի մօտ Նեղոսի վրայ կարեւոր դիրք
մը բռնած է, ուր հասած են Կորտոն զօ-
րավարին ղրկած քանի մը շողենաւներն, և
այսպէս Ուսլլի յառաջընթաց զօրագունդն
հաղորդակցութեան մտած է Խարդուսի
հետ: Մէհտին գորեղապէս տիրացուցած է
ՂՄէդամիկ, զոր Անգլիացիք դեռ չէին կըր-
ցած գրաւել մինչեւ 29 յունուար:

— Բէրիմէ (Կարմիր ծով) հեռագիր մը
կը ծանուցանէ թէ Գասթէ Ֆիգարաս իտա-
լական զրահաւորը զօրք հանած է ի Պէյրու-
անմիջապէս իտալական դրօշ պարզելով: Տե-
ղացիք լաւ ընդունելութիւն կ'ընեն իտա-
լացուց: Եգիպտացի զօրքը կը մեկնին Պէյ-
լուէ: — Հալաս կը ծանուցանէ թէ, Պէյ-
լուէի գրաւման վրայ, իտալացիք չալիտի ու-
շանան զրաւելու նաև ՂՄասովա: Իտալիա,
Անգլիա և Եգիպտոս համաձայններ են ի-
տալիոյ թողուլ ՂՄասովա: ուստի եգիպտա-
կան պահապան զօրքն ընդդիմութիւն չալի-
տի ընէ, և պիտի քաջուի:

— Գերմանիոյ Կայսրն իւր անձնական
քսակէն 1,000 անգլ. ոսկի տուաւ ի նպաստ
Սղանիոյ վերջին երկրաշարժէն վնասելոց:
— Ի Մասարիա Ֆէրնան Նիւնէզ դքսին ա-
պարանքին մէջ տրուած միակ երեկոյթ մ'ալ
3,000 անգլ. ոսկի արտադրեց:

— Պելլրատի կառավարութիւնը Բ. Ղրու-
նէն արաօնութիւն խնդրեր է սերպիական
մի քանի հիւպատոսութիւններ հաստատե-
լու Մակեդոնիոյ մէջ, բայց Կայս. կառա-
վարութիւնը մերժեր է:

— Պրիէր տը Լ'Իլ գորավարը կը հեռագ-
րէ թէ զօրաց համախմբումն աւարտած է
և յառաջխաղացումը պիտի սկսի ընդհուպ:

— Խառվութիւնք ծագեցան Մոսքուայի
գործաւորաց մէջ: Կը կարծուի թէ յեղա-
փոխական կուսակցութեան դրդմամբն է:
Խմբովին ձերբակալութիւնք եղան գործա-
ւորաց մէջ: Խռովարարք աւար առին քանի
մը մթերանոցներ: Մաստիկ յուզում կը տիրէ
Մոսքուայի մէջ:

— Բէլլունիէն առնուած տեղեկութիւնք

(1) Մայր (2) Հայր (3) Պատուէր (4) Անգուծ

կը ծանուցանեն թէ 1500 հոգիէ բաղկացեալ Փրանսական զօրախումբ մը յունուար 25ին գրաւեր է Քէլունկի շրջակայ քտնի մը չինական պիւրքեր : Ֆրանսացիք 9 մեռեալ և 55 վիրաւոր ունեցեր են : Գործողութիւնը կը շարունակուին :

— Վերջին ժամուն կը հեռադրուի թէ ապստամբք գրաւեր են զԽարթում և Կորտոն գերի բռնուեր է :

Ն Ե Ր Ք Ի Ն

Երկու օրէ ի վեր բազմաթիւ հեռադրեր կը փոխանակուին Հասան Վէհմի փաշայի և Բ. Դրան միջեւ : Բանակցութեանց ընթացքը Գոհացուցիչ է և նոր կարեւոր հրահանգներ պիտի զրկուին ընդհուպ Օսմանեան պատուիրակին :

— Վոյնլի լրագիրք կը ծանուցանեն թէ թէ այս օրերս Թուրքոյ-Հելլենական սահմանադիւին վրայ կռիւ մը տեղի ունեցեր է Օսմանեան զինուորներու և Յունական զօրագնդի մը միջեւ : Արիւնհեղութիւն չե եղած և կը յուսացուի թէ այս միջադէպ ծանր հետեւանքներ չպիտի ունենայ :

— Յունաց Ս. Պատրիարքին հիւանդութիւնը ծանր երեւոյթ մը կ'ստանայ և բըժիշկները պատուիրեր են որ ժամանակ մը հրաժարի ամեն կերպ մոտաւորական դրազումէ կամ աշխատութենէ :

— Վանէն կը գրեն թէ Վանայ և Բաղէի միջեւ ջրանց մը բանալու խնդրոյն մեծ կարեւորութիւն կը արուի յիշեալ դաւառաց դրամատէրներէն , որք կը խոստանան հարկ եղած դրամադրութիւն հայթայթել , եթէ Կայս. կառավարութիւնն յօժարի տուրք չառնուլ այն հողերէն զորս պիտի ուղղանէ այդ ջրանց :

— Անցեալ շաբաթ , Կրէտէի Ազգային ժողովոյ քրիստոնեայ անդամները կղզւոյն ընդհանուր կառավարչին բողոքագիր մը մատուցեր են , զայն ի Պոլիս հաղորդելու խնդրանք , ընդդէմ այն յիշատակագրին , զոր Կայսերական կառավարութեան զրկած էին Կրէտի քանի մը Խալմ նշանաւոր անձինք : Ինչպէս կը յիշուի , այս վերջինը կ'ամբաստանէին իրենց յոյն հայրենակիցները թէ մարդասպանութիւններ և ուրիշ խժոժութիւններ ի գործ կը դնեն Խալմաց վրայ :

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Պատրիարքական Տեղապահ Գեր. Ռուստուքլեան Տ. Գէորգ Մ. վարդապետ շաբաթ առաւօտ Կայս. պալատն երթալով՝ Վեհ. Սուլթանին երկրորդ սենեկապետ Վսեմ Հաճի Ալի պէյի ներկայացաւ և արժանաւայել պատուով ընդունուեցաւ : Ն. Գերապատուութիւնն իւր Տեղապահական պաշտօնին Վեհ. Սուլթանին կողմէ հաստատութեան համար ջերմ շնորհակալիւ յայտնելով խնդրեց Ալի պէյէն որ հաճի իւր և հայ ազգին շնորհապարտ զգացմանց թարգման կանգնիլ յոսս կայսերական գահոյից : Սենեկապետ պէյը Ն. Կ. Վեհափառութեան քով երթալով , վերադարձաւ եւ յայտնեց թէ Վեհ. Սուլթանը գոհ է այս արտայայտութիւններէն եւ իւր բարեւները կը զրկէ առ Տեղապահ Հայրն :

« Ն. Կ. Վեհափառութիւնը մասնաւոր ծանօթութիւն և համարում ունենալով Գեր. Ռուստուքլեան Հօր անձին նկատմամբ , կը փափաքէր իւր ներկայութեան ընդունիլ զՆ. Գերապատուութիւն , սակայն կարևոր դրացունք չներելով այսօր , մի քանի օրէն յատկապէս իւր ներկայութեան պիտի ընդունի զնա » :

Գեր. Ռուստուքլեան Հայր՝ վերստին իւր ջերմ շնորհակալութիւններն յայտնելով Վեհ. Սուլթանին այս յատուկ շնորհաց համար , և սրտազին բարեմաղթութիւններ ընելով վասն Ն. Կ. Վեհափառութեան անդին կենաց , գոհութեամբ մեկնեցաւ :

Ա.Ձ.Գ.Ա.Յ.Ի.Ն ԺՈՂՈՎ

Պ Ա Տ Ր Ի Ա Ր Ք

ԳԵՐ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ազգային ժողովն այսօր գումարեցաւ ի Մայր Եկեղեցի : Խուռն բազմութիւն , ներկայ երեսփոխանաց թիւն էր 87 : Բուէարկութեան արդիւնքն է .

Բաւ

Յարութիւն եպիս. Վեհապետեան	65
Խորէն » Նարպէյ	12
Մելքիսեդեկ »	4
Բարդուղիմէոս »	2
Խրիմեան »	2
Խորէն » Մխիթարեան	1
Չեռնպահ	1

Բուէարկութեան արդիւնքն երեսփոխանական և ժողովրդական բուռն ծափահարութեամբ ընդունուեցաւ , կատարեալ բարեկարգութիւն :

ԸՆԴ ԲԱՐՁՐ ՀՈՎԱՆԱԽՈՐՈՒԹԵԱՄԲ
ՄԵՄԱՇՈՒՔ ՏԻԿՆՈՋ ՊԻ ՔԱՂԻՍԻ
ԱԽՏՐՈՅ-ՀՈՒՆԳԱՐՈՅԵՍՊԱՆՈՒՀԻՈՅՆ
Պ Ա Ր Ա Հ Ա Ն Դ Է Ս
ԴԻՄԱԿԱՒՈՐ ԵՒ ԱՆԴԻՄԱԿ

ՏՈՒԵԱՂ ԲԵՐԱ, Ի ՆՈՐ ԹԱՏՐՈՆ

2/14 Փետրուար 1885

**Ի ՆՊԱՍՏ
Յ Ա Կ Ո Ք Ե Ա Ն**

ԶՐԻ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ԿԱԹՈՂԻԿԵԱՅ ՀԱՅՈՑ

Գործադիր Յանձնախումբ

Վսեմ. Գումանտէօր Ժ. տը Ծօրնի Նախագահ
» Եպիսկոպոս Գաբրիէլ
Մեծ. Ծ. Վ. Սմայլժ Գաբրիէլ
» Անտօն Ալիք Էֆէնտի Գաբրիէլ
Անդամք

Վսեմ. Ապրիլ պէյ
» Արիտապէս Էֆէնտի Ապրիլ
» Գույուճեան Պետրոս Էֆէնտի
Մեծ. Խաչան Մկրտիչ Էֆէնտի
Վսեմ. Նէնիալեան Տիմոթէոս Էֆէնտի
» Կոստանթնուպոլիսի Տիմոթէոս Էֆէնտի
Մեծ. Իսթիւճեան Կարապետ Էֆէնտի
» Համբարում Գրիգոր Էֆէնտի
» Ճիւղէլեան Տիմոթէոս Էֆէնտի
Վսեմ. Մարտիկ Օննիկ պէյ
Մեծ. Նորատուրկեան Արթիւր Էֆէնտի
Վսեմ. Նուրեան Էֆէնտի
Մեծ. Նուրիճան Տօթէօր
» Պիլիպիքճի Յովսէփ Էֆէնտի
» Սամսոնեան Գեորգ Էֆէնտի
» Մ. Սէֆէլտէր Լ.
» Սթէֆանովիչ Բ.
Վսեմ. Սթէֆէր Գալա
Մեծ. Սթանտօնի Ա.
» Վաչիկ Նիկօզա
» Տօնաճէ Սեթիմ
Վսեմ. Բօրիստ Գալա
Մեծ. Գալաճի Եֆէնտի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆԻԹԻԻՆՔ

Պ. ԱԳՈՔԻ ՄԵՐՈՒԹԻՆԸ
ՅՈՐԹԻՆԷ ՏԻՒ ՊՈՒԱԿՈՊԷ
ԹԱՐԳՄ. Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ

Իսթիւճեան Կարապետ Էֆէնտի ընտիր
Թարգմանութեամբ Արեւելքի մէջ իրեւ
Թերթօն հրատարակեալ այս հետաքրքրա-
շարժ և միանգամայն հրահանգիչ վէպին ա-
ռաջին և երկրորդ հատորները կազմուած
կը վաճառուին մայրաքաղաքիս ամեն հա-
զրափաճառաց քով, և կամուրջին գլուխը
ջրափաճառ Պօղոս և Յակոբ աղաներու խա-
նութիւնները : Դին 5 դրուշ :

Նոյն տեղերը կը վաճառուին նաեւ Կ.
Ս. Իսթիւճեան Էֆէնտի հետեւեալ Թարգ-
մանութիւնք :
ԹԱՓ. ՀՐԵԱՅ Բ. տպագրութիւն պատկե-
րազարդ Ա. հատոր . Դին զրշ 30
ՅԵՐԿԻԷ ԻԼՈՒՍԻՆ » » 7 1/2
ՄԱՐԲԻՉՈՒՀԻ » » 7 1/2
ԸՆՏԱՆԵՉՈՒՐԿ 2 հատոր » » 15
ԿԱՄԻՐ ՄԱՐԴՈՅ ԵՐԿՈՒՄԸ
2 հատոր » » 12
ԱՄՈՒՍՆՈՒԹԻՆՔ ՓԱՐԶԻ » » 6

ՏՕՔԹ. Ժ. ՍԱԳՍ

Մանկարար Քժիլ՝ վկայեալ Պետրին
համալսարանէն, մասնագէտ՝ իդական սեռի
հիւանդութեանց համար : Տօթ. Սադա որ
նոր եկած է Պետրինէն, կը բնակի Բերա,
վէնեալի միջոց, թիւ 5, Շէյխ Էֆէնտի
նորակառոյց շէնքին մէջ : Հիւանդ կընդունի
առատօտեան ժամն 8-10 և երեկոյեան ժամը
12-5 (ըստ եւր) :

Ժամը 10էն 12 Բրիտանական դեղարանը
կը դանուի և ժամն 5էն 5 Պալիս, Սեթիւդ
դեղարանն : Զգային հիւանդութեանց հա-
մար ելեքարական դործողութիւնք կը կա-
տարուին : Մանրագիտական գործանոց :

Աղքատ հիւանդք ձրիաբար կը դար-
մանուին :

Արտօնատէր Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՆՔ ԱՐԵՎԷԼԻ ԼՐԱԳՐՈՅ

ՃՇՄԱՐԻՏ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՅՔ ՍԻՆԿԵՐԻ



ԸՆՏԱՆԵԱՅ ՀՕՄԱՐ
ԿԱՐ ԿԱՐՈՂԱՅ ՀՕՄԱՐ
ԴԵՐՁԱԿԱՅ ՀՕՄԱՐ
ԿՕՇԿԱԿԱՐԱՅ ՀՕՄԱՐ
ԹԱՄԲԱԳՈՐԾԱՅ ՀՕՄԱՐ
ՓԵՂՈՒՐԱԳՈՐԾԱՅ ՀՕՄԱՐ
ԿԱԶՄԱՐԱՐԱՅ ՀՕՄԱՐ
ԳՈՐԾԱՐԱՆՏՆԵԱՐՅ ՀՕՄԱՐ

Դարձարանին այս նշանով



Կը գտնուին միմիայն ՍԻՆԿԵՐԻ ՄԵՔԵՆԱՅՔ մթերանոցները

ԿԱՂԱԹԱ,	Կլավանի խան	2)	Ներկայացուցիչ Կ. ՆԻՔՏԼԻՆԿԵՐ
ՊՈՂԻՍ,	Մահմուտ փաշա,	90	
ԲԵՐԱ,	Սիթէ աը Բերա	12)	

Ուրիշ ու է տեղ գտնուածները՝ Սինկերի ճշմարիտ մեքենայից նմանութիւններ են
ՁՐԻ ՓՈՐՁԵՐ **ՁՐԻ ԱՇԿԵՐՏՈՒԹԻՒՆ**

Շաբթէ չաբաթ վճարելու դիւրութիւն

ՕՍՊՈՐՆԻ ՅՈՐԵՆ ՀՆՁՈՂ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԵՔԵՆԱՅՆ

Օրը 88,000 քա-
ռակուսի կանգուն,
այսինքն 55 փեթեթ-
կը հնձէ, ծանրու-
թիւնն է 280 օխայ:
Մանրամասն տեղե-
կութեանց համար
դիմել առ ընդհա-
նուր դործակտար
Մկրտիչ և Յովհաննէս
Մուրադեան եղբայրք
Կալաթա Եօրկանձը-
լար ճատախի թիւ
70 և Պոլիս, Ֆինճանձըլար Եօգուչը, Եռսուփեան խանի դիմաց թիւ 22:

